Ազգ

AZG
armenian newspaper

Յունուար 25. 1992
Շաբաթ
Եռօրեայ թերթ.
Բ տարի. թիւ 5 (97)
գինը՝ 30 կ.

դասիլ՝ 69149
հասցէն՝ Երեւան 375010
Հանրապետութեան 47
հեռախօս՝ 581841
Ֆաքս՝ 562941
տելեքս՝ 243266 SULA SU

Ադրբեջանի հետ ԱՄՆ-ի առեւտրական կապերի սահմանափակման համար

Ամերիկայի հայկական համագումարի Երեւանի գրասենյակի հունվարի 23-ին հրապարակված հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ համագումարը սենատորներ Դոուլի եւ Սիմոնի հետ համատեղ պատրաստել է մի նախագիծ՝ Ադրբեջանի հետ Ամերիկայի Միացյալ Նահանգների առեւտրական եւ այլ կարգի կապերը սահմանափակելու դիրքորոշմամբ: Առաջիկա շաբաթ Դոուլը եւ Սիմոնը այդ փաստաթուղթը ներկայացնելու են ամերիկյան սենատին, իսկ կոնգրեսմեն Օուենսն այն իր հերթին կներկայացնի ներկայացուցիչների տանը (House of representatives):

Հաղորդագրության մեջ Ամերիկայի հայկական համագումարը հույս է հայտնում, որ այդ փաստաթուղթը աջակցություն կստանա կոնգրեսի զույգ կուսակցությունների կողմից: ■

ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ Արթուր Մկրտչյանին, վարչապետ Օլեգ Եսայանին

Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության անունից ջերմորեն շնորհավորում ենք Ձեզ եւ ի դեմս Ձեզ Արցախի ողջ ժողովրդին, ԼՂՀ-ի անկախության հռչակման առիթով: Հավատացնում ենք, որ ամեն ինչով սատար կկանգնենք արցախահայության պայքարին:

Գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է ճանաչել ԼՂՀ-ի անկախությունը եւ շարունակել հնարավոր բոլոր միջոցներով ավելի ակտիվ կերպով աջակցել արցախահայության արդար ձգտումների իրականացմանը: Հույս ենք հայտնում, որ Արցախի հերոսական ժողովուրդն ու նրա ազգընտիր իշխանություններն ամեն կերպ կնպաստեն մեր ազգային եւ միասնական պետականության ամրապնդմանը:

ՀՌԱԿ Հանրապետական վարչություն

Ընդդիմությունը կվերցնի՞ խաղաթղթի նետած ձեռնոցը

Այն բանից հետո, երբ պարզվեց, որ Համբարձում Գալստյանը Քաղխորհրդում ավելի շատ հակառակորդներ ունի, քան կողմնակիցներ, նիստերը սկսեցին համեմատաբար հանգիստ ու բավականին միաղաղաղ անցնել: Լսվում էին հանձնաժողովների հաշվետվությունները կատարված աշխատանքների մասին, քննվում գործկոմի կազմը եւ այլն: Եւ հանկարծ, որոշ շրջանակների կողմից ակնկալվելիք հրաժարականի փոխարեն, հունվարի 24-ին Համբարձում Գալստյանը ելույթ գցածի պես մեղմ ժպտալով հանդես եկավ մի առաջարկությամբ, որը ոչիսոր մտցրեց ընդդիմության կուռ շարքերում: Քաղաքաթեռը պատրաստակամություն հայտնեց իր իրավունքների մի մասը զիջելու խորհրդին եւ հատկապես մեծամասնություն կազմող ընդդիմությանը: Նրանց առաջարկվեց ներկայացնել իրենց թեկնածուներին նախագահի հոմանիտար եւ գոյապահպանական հարցերի գծով տեղակալների թափուր տեղերի համար: Համբարձում Գալստյանը նշեց նաեւ, որ անկախ նրանից՝ ներկայացված թեկնածուները իր սրտով կլինեն, թե ոչ՝ պատրաստ է նաեւ գործկոմի հինգ ցանկացած վարչության պետերի ընդդիմության թեկնածուների հետ աշխատելու: Ներկայացված միակ պայմանն այն էր, որ այդ թեկնածուներին պիտի կողմնակից լինեն քաղխորհրդի պատգամավորների մեկ երրորդը, այսինքն՝ պիտի 67 ձայն ունենան:

Սա հնչորեն լարված մի թակարդ է, քանզի դժվար թե 91 ընդդիմադիրները կարողանան կիսել, բաժանել այս ընդամենը 7 տեղը ու հազիվ թե այս պայմաններում հնարավոր լինի 67 ձայն հավաքել: Իսկ եթե նույնիսկ հնարավոր էլ լինի՝ հազիվ թե վերջնական քվեարկության ժամանակ նրանց հաջողվի ստանալ պահանջվող 101 ձայնը: Իսկ ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու իր իրավունքը Համբարձում Գալստյանը չի պատրաստվում խորհրդին զիջել...

Ուրեմն՝ մի կողմից «բաժանիր, որ տիրես», իսկ մյուս կողմից՝ քաղաքի այսպիսի կոալիցիոն կառավարության ստեղծմամբ փոքրանում է քաղաքապետի

նստատեղի պատասխանատվության բաժինը: Եթե ընդդիմությունը ընդունի քաղաքապետի մարտահրավերը (հիմք՝ Համբարձում Գալստյանը այս ամենը այլ կերպ բնորոշեց՝ որպես մի պարզված ձեռք ու *«շատ վատ կդիտվի, եթե ընդդիմությունն ի պատասխան ձեռք չմեկնի»*) ստիպված կլինի քաշել այս գերբարդ ժամանակաշրջանում քաղաքի ղեկավարության ծանր լուծը: Բայց, ըստ երեւույթին, ընդդիմության այս ձեռնոցը չվերցնել չի կարող, քանի որ այդ դեպքում ակնհայտ կլինի, որ նախորդ ամբողջ պայքարը ընդամենը *«աթոռի գզվռոցոց»* էր, ու ընդդիմությունը չունի կառուցողական ու այլընտրանքային ծրագիր:

Այս կապակցությամբ ելույթ ունեցող ընդդիմադիր պատգամավորական խմբերից մեկի՝ «Մայրաքաղաքի» ներկայացուցիչը մերժեց առաջարկված հնարավորությունը, պատճառաբանելով, թե օրինականորեն ընտրված նախագահի իրավասությունն է թեկնածուներ առաջարկելը (իրենք էլ իրենց են վերապահել այդ թեկնածությունները հսկողությամբ վիճեցնելու իրավունքը): «Փարոս» խմբի ներկայացուցիչ եւ Քաղխորհրդում առկա ընդդիմության առաջնորդներից մեկը՝ Հայկ Բաբուխանյանը հայտարարեց, որ իրենք *«ոչ մերժում են, ոչ էլ կարող են ընդունել նախագահի առաջարկը»*:

Ի վերջո, ընդդիմությունը բայմ-առաջ վերցրեց ու հետագա նիստերից մեկում պարզ կլինի, թե ինչ կհետեւի նախագահի այս առաջարկությանը:

Բայց, մեր խորին համոզմամբ, ընդդիմության ցանկացած պատասխան քայլի դեպքում էլ Համբարձում Գալստյանն արդեն իր խաղը խաղացել՝ հաղթել է...

ԱՆՆԱ ԽՈՐՈՅԵԼՅԱՆ

Ադրբեջանի հետ ԱՄՆ-ի առեւտրական կապերի սահմանափակման համար

Ամերիկայի հայկական համագումարի Երեւանի գրասենյակի հունվարի 23-ին հրապարակված հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ համագումարը սենատորներ Դոուլի եւ Սիմոնի հետ համատեղ պատրաստել է մի նախագիծ՝ Ադրբեջանի հետ Ամերիկայի Միացյալ Նահանգների առեւտրական եւ այլ կարգի կապերը սահմանափակելու դիրքորոշմամբ: Առաջիկա շաբաթ Դոուլը եւ Սիմոնը այդ փաստաթուղթը ներկայացնելու են ամերիկյան սենատին, իսկ կոնգրեսմեն Օուենսն այն իր հերթին կներկայացնի ներկայացուցիչների տանը (House of representatives):

Հաղորդագրության մեջ Ամերիկայի հայկական համագումարը հույս է հայտնում, որ այդ փաստաթուղթը աջակցություն կստանա կոնգրեսի զույգ կուսակցությունների կողմից: ■

Ամերիկյան դեսպանատան հետ կապված գործնական հարցեր

Երեւանում են գտնվում ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի պատասխանատու աշխատողներ Ջորջ Ջենկինսը, Ռիչ Ռավորսկին եւ Մոսկվայում ԱՄՆ-ի դեսպանատան երկրորդ քարտուղար Օրի Կարլսոնը: Պատվիրակությունը ժամանել է Հայաստան՝ ծանոթանալու մեր հնարավորություններին եւ քննարկելու այն աղագայում Երեւանում ամերիկյան դեսպանատուն բացելու հետ կապված հարցերը: Երեկ նրանք հանդիպումներ են ունեցել ՀՀ արտաքին գործերի, ավտոտրանսպորտի, երկաթգծի, առողջապահության նախարարություններում, ՀՀ արտաքին տնտեսական բանկում: Այսօր նախատեսվում են հանդիպումներ հայկական ավիաընկերության, կապի նախարարության եւ Երեւանի քաղխորհրդի ղեկավարության հետ: ■

Հրավեր Իրանի Մեջլիսին

Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահությունը որոշում է ընդունել հանրապետությունն հրավիրել Իրանի Մեջլիսի պատվիրակությանը:

Ինչպես հաղորդեց խորհրդարանի արտաքին կապերի հանձնաժողովի փոխնախագահ Եվգենի Քոչարյանը, այդ գաղափարը առաջացել էր երկու ամիս առաջ, երբ Հայաստան էր այցելել Իրանի պատվիրակությունը արտաքին գործերի փոխնախարարի գլխավորությամբ: *«Մեր աշխարհաքաղաքական դիրքի առանձնահատկություններից ելնելով, մենք ասես գտնվում ենք պարկի մեջ,* նշեց Քոչարյանը, *եւ նրանից դուրս գալու համար պետք է վարենք շրջանային քաղաքականություն»*: Նրա խոսքերով, կարելի է խոսել նաեւ Հայաստանի հետ դյուրին հարաբերություններ հաստատելու Իրանի շրջանակների շահագրգռվածության մասին: ■

Արցախ. գնդակոծությունները եւ ավերածությունները շարունակվում են

Հունվարի 23-ի լույս 24-ի գիշերը Շուշիի, Մալիբեյլիի եւ Խոջալուի կողմից ուժգին հրետակոծման եւ գնդակոծման է ենթարկվել Ստեփանակերտ քաղաքը, հաղորդում է «Լուր» գործակալությունը: Նախնական տվյալներով, կա 5 վիրավոր: Ավերվել են բազմաթիվ տներ: Միեւնույն ժամանակ, նույն գիշերը ադրբեջանական Շեհեգ գյուղի կողմից գնդակոծման է ենթարկվել Ղարաչինար գյուղը: Հայկական ինքնապաշտպանության ուժերը պատասխան միջոցներ են ձեռնարկել: Տուժածների մասին լուր չկա: ■

Բարոնուհի Քոկսը վճռականության կոչ է անում

«Միջազգային քրիստոնեական համերաշխության» պատվիրակության ղեկավար բարոնուհի Քերոլայն Քոկսը հայտարարել է, որ մտադիր է Մեծ Բրիտանիայի խորհրդարանի ուշադրությունը բեւեռել Լեռնային Ղարաբաղի բնակչության իրավիճակի վրա: Հունվարի 23-ին Մոսկվայում տեղի ունեցած մամլո ասուլիսում նա հաղորդեց, որ շրջանում աճում է բռնությունը հայերի նկատմամբ: Նա մտահոգություն է հայտնել Ադրբեջանի կողմից խորհրդային բանակի սպառազինությունների զավթման առիթով: Նրա կարծիքով, զինված կոնֆլիկտը կարող է արդեն ամենամոտ ժամանակ վերածվել պատերազմի: *«Այն կառավարությունները, որոնք չեն ցանկանում դա,*- նշեց բարոնուհի Քոկսը,- *պետք է շատ միջամտեն»*: Նրա համոզմամբ, Անգլիայի կառավարությունը նախկին Միության երկրներին տնտեսական օգնության տրամադրումը պետք է կապի մարդու իրավունքների պաշտպանության խնդրի հետ: ■

Ռաֆֆի Հովհաննիսյանը շարունակում է օտար երկրների հետ համաձայնություններ ստորագրել

ՀՀ արտաքին գործերի նախարարությունից մեր ստացած լուրերի համաձայն, երեկ հունվարի 24-ին, Հայաստանի արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանի եւ Ավստրիայի արտաքին գործերի նախարար, դոկտոր Ալոիս Մոկի միջեւ տեղի է ունեցել դիվանագիտական նոտաների փոխանակում, որով Հայաստանի եւ Ավստրիայի միջեւ հաստատվել են դիվանագիտական հարաբերություններ, երկու երկրներում դեսպանատներ բացելու մակարդակով:

Արտաքին գործերի նախարարության մամլո եւ լրատվության կենտրոնի քարտուղար Գառնիկ Բաղալյանը հաղորդեց, թե «Ռաֆֆի Հովհաննիսյանը հանդիպում է ունեցել Ավստրիայի հանրապետության նախագահ Կուրտ Վալդհայմի, վարչապետ Ֆրանց Վրանիցկու եւ Ավստրիայի ազգային խորհրդի նախագահ Հայնց Ֆիշերի հետ»:

Տեղի ունեցած զրույցների ժամանակ Ռաֆֆի Հովհաննիսյանը ավստրիական կողմին ներկայացրել է Արցախի հիմնահարցի կարգավորման Հայաստանի դիրքորոշումը եւ միջազգային մակարդակով հարցը քննարկելու հնարավորությունները: Հայաստանի արտգործնախարարը հանդիպում է ունեցել նաեւ ՄԱԿ-ի հայազգի աշխատողների եւ Վիեննայի հայկական համայնքի հետ:

Այսօր արտգործնախարարը մեկնելու է Ժնեւ, իսկ երկուշաբթի օրը Իսպանիայի մայրաքաղաք Մադրիդ:

Մեր ստացած լուրերի համաձայն, Ռաֆֆի Հովհաննիսյանը մասնակցելու է նաեւ Պրագայում անցկացվելիք Եւրոպայի Անվտանգության եւ Համագործակցության խորհրդի ժողովին, ուր պիտի հանդիպի Եւրոպայի համայնքի անդամ երկրների արտաքին գործերի նախարարների հետ: ■

Երուսաղեմի քրիստոնյա հոգեւոր պետերը բողոքում են հրեական ոտնձգությունների դեմ

Երուսաղեմի քրիստոնյա եկեղեցիների հոգեւոր պետերը հրապարակել են մի հաղորդագրություն, որում բողոքում են Երուսաղեմում եւ նրա շրջակայքում Իսրայելի կիրառած քաղաքականության դեմ:

Հաղորդագրությունը ստորագրել են 8 եկեղեցիներ, գլխավորապես լատին, հույն ուղղափառ եւ հայ հոգեւոր պետերը՝ պահապան Սուրբ տեղյաց: Հաղորդագրությունը դատապարտում է Երուսաղեմում հրեական կազմակերպությունների կողմից *«գաղութատիրական հարձակողական քաղաքականությանն»* եւ կառավարության լռության դեմ: Հաղորդագրությունում նշվում են այն վնասները, որոնք հասցվել են բազմաթիվ վանքերի, ինչպես՝ Ս. Ստեփանոս եւ Ս. Գեորգ, որոնք *«նոր ճանապարհների տակ թաղվելու վրա են»*: Բյուզանդական շրջանից մնացած մի հազվագյուտ խաչանկար բալանվել է, իսկ *«երկու հոգեներ, որոնք պատկանում են 6-րդ դարի հայկական վանքի, թաղվել են ժայռերի զանգվածների տակ»*: Եպիսկոպոսները հայտարարում են, որ եթե կառավարությունը վերջ չդնի այս քաղաքականությանը, նրանք դիմում կներկայացնեն Երուսաղեմը միջազգային պաշտպանության տակ առնելու: ■

Յամբաս կտրի նախկին ԽՍՀՄ-ին տրվելիք օգնությունը

Վաշինգտոնում չորեքշաբթի օրը 47 երկրների մասնակցությամբ բացված երկօրյա խորհրդաժողովը հինգշաբթի օրը ավարտվեց համեստ արդյունքներով: Գլխավորապես Մ. Նահանգների եւ Եւրոպական համայնքի երկրների կողմից նախկին խորհրդային հանրապետություններին տրվելիք օգնության ծավալը հեռու կլինի նախատեսվածից եւ կսահմանափակվի հազիվ 12 միլիարդ դոլարի ընդհանուր արժեքով:

Ժողովի առաջին օրը հաստատվել էր Եւրոպական համայնքի երկրների եւ հատկապես Գերմանիայի կանցլեր Հելմուտ Քոլի կողմից Մ. Նահանգների նկատմամբ կատարված բուռն քննադատությամբ, նկատի ունենալով, որ ամերիկյան կողմը այդ նպատակին հատկացրել էր ընդամենը 5 միլիարդ դոլար, որի մեծ մասը իբրեւ վարկ է տրվելու հանրապետություններին՝ ամերիկյան սննդեղեն գնելու համար: Իրենց հերթին, Եւրոպական համայնքի երկրները կտրամադրեն 4 միլիարդ դոլար, մինչդեռ Ճապոնիան շարունակում է իր կողմից տրվելիք օգնությունը պայմանավորել Կուրիլյան կղզիների հարցով:

Խորհրդաժողովի ավարտին ամերիկյան կողմը հայտարարեց, որ փետրվարի 10-ից գինվորական 54 օդանավեր 17 հազար տոննա սննդեղեն եւ դեղորայք են հասցնելու հանրապետություններին: ■

Վրաստանում դեռեւս անորոշություն

Վրաստանի ռազմական խորհրդի մամլո կենտրոնում հաղորդեցին, որ հունվարի 24-ին որեւէ զինյալ բախումներ Արեւմտյան Վրաստանում տեղի չէին ունեցել: Առավոտից հակադիր կողմերը բանակցում էին: Սակայն Զուգդիդիից հաղորդեցին, որ բանակցությունները շատ դժվար էին ընթանում, քանի որ ռազմական խորհուրդը չէր ցանկանում ընդունել զուգդիդցիների առաջարկությունները, մասնավորապես, որ գվարդիան ու «Մխեդրիոնին» չմտնեն քաղաք: Քաղաքացիները իրենք են ցանկանում ընտրել ինքնակառավարման մարմիններ: Իսկ Ռազմական խորհուրդը պնդում է, որ ամբողջ իշխանությունը հանձնվի իրենց լիազորին: ■

digitised by A.R.A.R.@

Ո՞ւր եւ ինչպե՞ս են տեղավորվելու արտասահմանյան դեսպանատները

Անրասեղծ Հայաստանի Հանրապետությունը, որի անկախությունը վերջին տվյալներով արդեն ճանաչվել է 60-ից ավելի երկրների կողմից, գտնվում է նոր հարցերի առաջ: Մեզ ճանաչող բոլոր երկրները չեն, որ այսօրվանից բացում են, սակայն նրանցից այսօր արդեն յոթ-ութ երկրներ դաշտոնապես համաձայնվել են փոխադարձաբար դեսպանատներ բացելու Երեւանում եւ իրենց մայրաքաղաքներում:

Ո՞ւր եւ ինչպե՞ս տեղավորել այդ երկրների ներկայացուցիչներին Երեւանում:

Արտասահմանյան երկրները սովորաբար կամ բենք են գնում, կամ վարձում, կամ ձրի իրենց տրամադրված մի բենքում տեղավորվում, փոխարենը իրենք էլ նույնն են անում իրենց երկրում, կամ հող են գնում եւ դեսպանատուն կառուցում:

Հայաստանի կառավարությունը, ըստ երեւույթին, սրանցից երկրորդ տարբերակի վրա է ուզում կանգ առնել, ելնելով երկրի տնտեսական վիճակից:

Դեռեւս վերջնական լուծման չեն հասել նաեւ այն վիճաբանությունները, ըստ որոնց անկախացած հանրապետությունները պետք է բաժիններ ստանան նախկին Խորհրդային Միության արտասահմանում վաղուց ունեցած դեսպանական բենքերից_ու կառույցներից:

Հետեւելով արտգործնախարարության խորհրդին, դիմեցինք Նախարարների խորհրդին առընթեր պետական ունեցվածքի տնօրինման եւ աղաղեսականացման կոմիտեի նախագահությանը: Կոմիտեի նախագահ պրն. Պավել Ղալբախչյանն ասաց, թե հանրապետության փոխնախագահ եւ վարչապետ պրն. Գագիկ Հարությունյանից 1991 թ. դեկտեմբերի 5-ին կարգադրություն են ստացել արտգործնախարարության հետ համատեղ երկաբաթյա ժամկետում առաջարկություններ ներկայացնել արտասահմանյան երկրների ներկայացուցչություններին բենքեր տրամադրելու համար:

Աղաղեսականացման կոմիտեն դեսպանատների համար առաջարկում է քաղաքում գտնվող 30 բենք:

«Հիմնականում ընտրել ենք այնպիսի, որոնք ուղիղ կապ չունեն իրենց կողքը գտնվող բենքերի հետ եւ ներկա պայմաններում առավել հարմարավետ են, մեքենաներ կանգնեցնելու հնարավորություն ունեն, ասում է պրն. Ղալբախչյանը: *Նախատեսել ենք Մարշալ Բաղրամյան պողոտայի սկզբնամասերի, նախկին Ալավերդյան այժմյան Հանրապետության փողոցի, հրապարակին մոտիկ բենքերը եւ քաղաքի կենտրոնի որոշ բենքեր, որոնք մինչեւ օրս պահպանել են ծառայողական իրենց ուրույն տեսքը,* շարունակում է պրն Ղալբախչյանը: *Աչքի տակ են Բաեւ Չարենցի եւ Մարյան փողոցների վրայի մի շարք բենքեր: Որոնումները շարունակվում են»:*

Պրն. Ղալբախչյանին խնդրեցինք, որպեսզի կոնկրետ որեւէ բենք նշի:

«Գիտնականի տունը, որը պատկանում է Ակադեմիային, ժողովով ասաց նա: Բացի վերոհիշյալ չափանիշներից, ընտրել ենք այն բենքերը, որոնք նախկինում պատկանում էին Միութենական կառուցվածքներին, կոմունիստական կուսակցությանը եւ այլն, եւ որոնք այսօր արդեն ինքնալուծարված են»:

Իսկ այն հիմնարկները, որոնց «ձեռից վերցնելու» են բենքերը, նրանք ո՞ւր են տեղափոխվելու, արդյոք դժգոհություններ չե՞ն առաջանալու:

«Դժգոհություններ միշտ կլինեն, սակայն կարծում եմ, այդ հիմնարկների պատասխանատուները կըմբռնեն հարցը եւ կմտնեն մեր վիճակի մեջ: Բացի այդ, նրանց փողոցում չենք թողնի: Նրանց ենք տրամադրելու Երեւան քաղաքում հարմար բենքեր»:

«Իսկ եթե մեր արտասահմանցի բարեկամները նախընտրեն հողատարածություններ գնել»:

«Մտածված է նաեւ այս տարբերակը, եւ սրա համար է, որ կառավարությունը հանձնարարել է նաեւ ճարտարապետության եւ քաղաքաշինության պետական վարչությանը, որպեսզի ամենակարճ ժամանակամիջոցում ընտրվեն ու առաջարկվեն ազատ հողեր, դեսպանատուն կառուցելու համար վաճառելու նպատակով»:

«Ամենամեծ բենքը 2200 քմ է, որը մտածում ենք առաջարկել ամերիկացիներին, շարունակում է պրն Ղալբախչյանը, *ամենափոքրը 400 քմ, մետրոպոլիտենի ուսիկանության բենքը, որը գտնվում է հրապարակի մետրոյի ելքի աջ կողմում: Հայտնի չէ տակավին, թե սա որ երկրին կառաջարկվի»:*

«Իսկ որտե՞ղ պիտի բնակվեն դեսպանները եւ դեսպանատան աշխատակիցները», հարցրեցի պրն. Ղալբախչյանին:

«Հարցը, կարծում ենք, կլուծվի հետեւյալ կերպ. այն դեսպանատան բենքերի եւեթ կողմերը, որ կան բնակվելու հարմարություններ, տվյալ երկրների դեսպանատան աշխատողներն այնտեղ կարող են աղրել, իսկ մնացածների համար երեւի կտրամադրվի հատուկ մի բենք, որ տարբեր հարկաբաժիններում կապրեն զանազան դեսպանատան աշխատողները»:

Մեզ ասացին, թե արտերկրի ներկայացուցիչների աշխատանքի ու բնակության վայրերի մասին կատարված այս եւ այլ առաջարկները գտնվում են կառավարության սեղանին, հատուկ թղթապանակի մեջ:

Հուսով ենք, որ այս փաստաթղթերը շատ չեն սպասի թղթապանակներում, եւ մի օր մեր արտասահմանցի նոր երեւանաբնակներին հանկարծ դռան բենքին տեսնելով փաստի առաջ չենք կանգնի:

ՐԱՖՖԻ ՀԵՐՄՈՆ ԱՐԱՔՍ

Սվիդուտի կոմիտեն եւ նրան հարող բենքերը



Գիտնականի տունը Մոսկովյանի վրա

Թոշակների հավելումների, նպաստների եւ նախագահի հրամանագրերի մասին

Մամուլում վերջերս տպագրվեցին Հայաստանի Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հրամանագրերը, որոնց մեջ իրենց մասնակի տեղն ունեին կենսաթոշակները նվազագույն չափի եւ երեխաների համար տրվող նպաստների միասնական համակարգ սահմանելու մասին հարցերը:

Հրապարակումից հետո մեզի ստացանք մի քանի հեռախոսազանգեր, որոնց հեղինակները, լավ չտպավորվելով հրամանագրերի մի քանի կետեր, խնդրում էին պարզաբանում:

Եղանք սոցիալական ապահովության նախարարության կենսաթոշակների ու նպաստների վարչության պետ Հենրիկ ԱԼԶԱՆԴՅԱՆԻ մոտ եւ խնդրեցինք պատասխանել մեզ ուղղված հարցերին:

– Պարոն Ալվանդյան, կենսաթոշակների նվազագույն չափի մասին հրամանագրի 4-րդ կետում ասված է, որ 1992 թ. հունվարի 5-ից Հայաստանի Հանրապետությունում բոլոր կենսաթոշակները պետք է բարձրացնել 140 ռուբլով, այն ավելացնելով կենսաթոշակի հիմնական չափին, միեւնույն ժամանակ սահմանելով կենսաթոշակի նվազագույն չափ 260 ռուբլի: Ի՞նչ հասկանալ թոշակի հիմնական չափ ասելով, եթե նվազագույն չափը պետք է լինի 260-ը: Այստեղ արդեն դեր չպիտի խաղա այդ հիմնական չափ ասվածը:

– Այստեղ հարկ է պարզաբանել մի բան. ո՞րն է համարվում կենսաթոշակի հիմնական չափը: Դա այն չափն է, որ հաշվարկվել է կենսաթոշակառուի ունեցած աշխատանքից եւ աշխատավարձից գումարած 91 թ. հունվարի 1-ից կենսաթոշակի գտնվելու տարիների համար տրված հավելավճարը 5-ից մինչեւ 40 ռուբլու չափով: Այստեղ պետք է նշել եւս մեկ հանգամանք, որ 1991 թ. ապրիլից սահմանված փոխհատուցման գումարները 65 ռ. չափով, չեն մտնելու այդ հիմնական կենսաթոշակի չափի մեջ:

– Ստացվում է այնպես, որ 140 ռուբլի թոշակ ստացողն էլ կստանա լրացուցիչ 140 ռուբլի, 70 ռուբլի ստացողն էլ: Սակայն քանի որ նվազագույն թոշակի չափը պետք է լինի 260 ռուբլի, բարձր եւ ցածր թոշակ ստացողների միջեւ տարբերությունը կկազմի ընդամենը 10-ից 20 ռուբլի՞:

– Այո, այդպես է: Այստեղ հարկ է նշել, որ նախագահի հրամանագրով բոլոր տեսակի կենսաթոշակներին, այդ թվում նաեւ սոցիալական կենսաթոշակներին, որը մեզ մոտ սկսել է նշանակվել 91 թ. հունվարի 1-ից, դարձյալ ավելացվում են 140 ռուբլով, դայմանով, որ նվազագույնը 260 ռուբլուց ցածր չլինի:

– Եթե մարդը մինչեւ այս հրամանագիրը ստանում էր 70 ռուբլի, այդ 140 ռ. ավելացումը փաստորեն նրան չի վերաբերվում, նրա կենսաթոշակին այնքան պիտի ավելացվի, որ նա ստանա 260 ռուբլի: Ի՞նչ միջոցներով է այդ 70 ռուբլին դառնում 260 ռուբլի:

– Դա դառնում է նախագահի հրամանագրով, այն է, որ թոշակները չպետք է ցածր լինեն 260 ռուբլուց:

– Հիմա մի այլ հարց: Ասենք թե մեկը մի քանի տարի առաջ ձեւակերպել է իր թոշակը, սակայն իրեն թույլ չի տվել թե թոշակ ստանալ եւ թե աշխատել: Հիմա, նոր որոշմամբ նրան թույլատրվում է: Նա կարո՞ղ է վերահաշվարկել իր թոշակը, ելնելով վերջին տարիներին ստացած բարձր աշխատավարձից:

– Բանն այն է, որ մինչեւ Գերագույն խորհուրդը ընդունի Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային ապահովության մասին օրենքը (որն արդեն ընդունվել է առաջին ընթերցմամբ), մենք պետք է ղեկավարվենք նախկին Միության երկու օրենքներով՝ 1956 թվականի եւ 1990 թվականի մայիսի 15-ի օրենքները:

Եթե քաղաքացին հունվարին ներկայացնի 500 ռուբլի աշխատավարձ, մենք, միեւնույն է, պետք է ղեկավարվենք այդ հին օրենքով՝ նրա թոշակը կնշանակվի 120 ռուբլի, դրան կգումարվի 140 ռուբլին: Միայն նոր օրենք ընդունելուց հետո այդ թոշակը կվերահաշվարկվի ըստ նշած աշխատավարձի եւ ունեցած ստաժի:

– Դա կվերահաշվարկվի վերջին մե՞կ տարվա, թե՞ երկու տարվա հաշվով:

– Կենսաթոշակային ապահովության նախագծում կա 2 տարբերակ, մեկը՝ 5, մյուսը՝ 3 տարվա վաստակից: Տեսնենք, թե Գերագույն խորհուրդը որ տարբերակը կընդունի:

– Հիմա խնդրում եմ պարզաբանել երեխաների համար տրվող նպաստների միասնական համակարգ սահմանելու մասին հրամանագրի առաջին կետի «բ» ենթակետը: Եթե յուրաքանչյուր երեխա իր ծննդյան օրից մինչեւ 17 (կամ 18) տարեկան դառնալը պետք է ստանա 110 ռուբլի նպաստ, ապա ինչպե՞ս հասկանալ «ամսական 110 ռուբլի՝ մինչեւ երեխայի 2 տարին լրանալը նրան խնամելու համար մասնակի վճարովի արձակուրդում գտնվելու դեպքում» տողերը: Երեխան առանձին 110 ռուբլի պիտի ստանա, խնամող մայրը առանձի՞ն:

– Նախքան ձեր հարցին պատասխանելը ասեմ, որ մինչեւ 1992 թ. հունվարի 1-ը հանրապետությունում եւ նախկին Միությունում գոյություն ունեին շուրջ 14 փոխհատուցումներ եւ նպաստներ, որոնք շատ էին դժվարացնում մեր աշխատանքները:

Նախագահի հրամանագրով սահմանվել է միանվագ նպաստ ամսական 110 ռուբլի բոլոր երեխաներին մինչեւ 17 տարին լրանալը եւ 18 տարին լրանալը, եթե ուսանում են:

Եթե մայրը գտնվում է մասնակի վճարովի արձակուրդում մինչեւ երեխայի 2 տարին լրանալը պետք է ստանա լրացուցիչ 110 ռուբլի:

– Ի՞նչ ունեք լրացնելու:

– Երեխա ծնվելու դեպքում նրան միանվագ նպաստ է սահմանված 250 ռ., այն կը-վճարվի ծնողներից մեկի աշխատավայրում, իսկ եթե ծնողները չեն աշխատում սոցիալական ապահովության մարմինների կողմից:

Օգտվելով առիթից, ես ուզում եմ անել մի փոքր հայտարարություն. հունվարի 1-ից, համաձայն նախագահի հրամանագրի, կենսաթոշակները պետք է վճարվեն սոցիալական ապահովության մարմինների կողմից. այդ կապակցությամբ խնդրում եմ հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներին՝ շատ կարգով իրենց մոտ աշխատող թոշակառուների փաստացի բնակության վայրի սոցատ բաժիններ ուղարկել հանձնարարագրերի կտրոնները, որպեսզի կենսաթոշակների վճարումները վերսկսեն սոցատ բաժինները:

Լ. ԴՇԽՈՅԱՆ

Ավիատոմսերի գները թռչում են, ուղեւորները՝ մնում

Շատ-շատերի մոտ մեծ ափոթ է առաջացրել արտասահմանյան թռիչքների տոմսերի գների բարձրացումը: Այդ կապակցությամբ դիմեցինք օդային կապերի կենտրոնական գործակալության միջազգային բաժնի պետ Իսահակ ՍԵՅՐԱՆՅԱՆԻՆ:

– Միջազգային չվերթների տոմսերի արժեքները որոշել է Մոսկվան, որովհետեւ իրենք են վճարում արտասահմանի պարտքերը վայրուցայով: Սակայն, եթե անգամ մենք էլ որոշեինք, ելնելով տվյալ չվերթի ծախսերից, այլ կերպ չէինք կարող: Մենք չենք կարող վնասով աշխատել: Երբ լրիվ անկախանանք, այն ժամանակ նոր հիմքերս գները կսահմանենք: Իսկ առայժմ այն բարձրացվել է 1 դոլլարը հաշվելով 110 ռուբլի: Վերջերս ես Մոսկվայում էի: Այնտեղ տոմս գնողների թիվը նվազել է: Իմ կարծիքով, մոտ ապագայում չվերթների մի մասը կիսադատարկ կիրագործվեն: Մոսկվայում կարծես թե գներն իջեցնելու տրամադրություն կար: Սպասում են 10-15 օրվա վիճակագրական տվյալների: Ես զրուցել եմ շատ մասնագետների հետ, նրանք նույնպես համաձայն չէին այս գներին: Բնականաբար, Հայաստանում նույնպես նվազել է ուղեւորների քանակը: Վերջին հաշվով, դա կը-հասցնի տոմսերի արժեքները վերանայելուն:

– Գների բարձրացումից հետո փոխվե՞լ է, արդյոք, մեր Աերոֆլոտի սպասարկման մակարդակը:

– Ավիաընկերությունն աշխատում է այդ ուղղությամբ: Սակայն, գների բարձրացումը հիմնականում կապված է նավթի թանկացման հետ: Իհարկե, բեռների փոխադրման հետ կապված ոչ մի փոփոխություն դեռեւս չի եղել:

– Հայկական ավիաընկերությունը միջազգային «ԻԱՏԱ» կազմակերպության անդամ է: Որքանո՞վ եք հետեւում այդ կազմակերպության օրենքներին եւ ընդհանրապես ինչպե՞ս է այն արտահայտվում:

– Այն կարտահայտվի հետագայում, քանի որ նոր է լուծարվել Աերոֆլոտի նախկին միութենական նախարարությունը, եւ թռիչքների թույլտվությունն ու սպասարկումն առայժմ կապված է կենտրոնի հետ: Ուստի լրիվ առանձնանալու դեպքում կարող ենք ինքներս մեր հարցերը լուծել: Իսկ առայժմ դեռեւս հին ծեւով ենք աշխատում: Սակայն կենտրոնից կախվածությունը միայն տեխնիկական բնույթ է կրում:

– Իսկ ինչպիսի՞ զեղչեր եք սահմանել:

– Առայժմ զեղչեր չկան: Իսկ արտասահմանցի ուսանողներին, եթե նախկինում տալիս էինք գնալու եւ վերադարձի տոմսեր, այժմ միայն գնալու: Օրինակ, սիրիացիներին տալիս ենք տոմս մինչեւ Հալեպ:

– Տվյալ չվերթի տոմսի արժեքը արտասահմանում համեմատաբար էժան է: Ինչո՞վ է դա պայմանավորված:

– Այն կապված է որոշակի չվերթների հետ: Օրինակ՝ Երեւան-Փարիզ-Լոս Անջելես չվերթի համար արտասահմանում մեր գործընկերներն ունեն իրենց տարիֆները, ըստ որի կարող են ուղեւորներին էժան գներով տոմսեր տալ: Դրանք հատուկ պատվիրած թռիչքներ են: Իսկ հայկական ավիաընկերությունը պատրաստ է ցանկացած չվերթ իրագործելու, եթե կա պատվիրատու: Օրինակ, տուրիզմի բյուրոն պատվիրեց երկու չվերթ Տրապիզոն: Նրանց պատվերով շուտով կիրագործենք նաեւ Երեւան-Վարշավա չվերթը: Մենք իրագործում ենք Երեւան-Հալեպ չվերթը, որի տոմսի արժեքը ռուբլով 29 հազար 7 հարյուր է երկու կողմի համար, վայրուցայով՝ 543 դոլլար մի կողմի համար, Երեւան-Փարիզ հատուկ պատվիրված չվերթը, որը միայն վայրուցայով է, արժե 500 դոլլար: Ուղեւորներին կուզեի ասել, որպեսզի համբերությամբ սպասեին մինչեւ վիճակը կարգավորվի: Իհարկե, նախկին արժեքները չեն վերականգնվի, բայց համեմատաբար կիջնեն: Իսկ առայժմ մենք դիմել ենք Մոսկվա, որպեսզի Սիրիայի տոմսի արժեքը իջեցվի եւ դառնա 12-14 հազար ռուբլի:

Պատրաստեց Գայանե ԱՖՐԻԿՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

Սպիտակ ձիերի ժամանակը չի անցել

Հայ-ադրբեջանական հարաբերությունների վերջին չորս տարիների ընթացքում գրեթե չեն դադարել երկկողմ եւ եռակողմ բանակցությունները: Դրանք փուլ առ փուլ զարգացել են, մտել փակուղի, եւ արդյունքում փոխվել են միայն պահի կարեւորությունը պահանջող իրադրություններ, եղել են գրավոր կամ բանավոր խոստումներ, սակայն իրականում դրանց նվազագույն մասն է իրագործվել: Այժմ, խաղաթղթերի նոր պայմաններում, երբ երկու պետությունները՝ Հայաստանն ու Ադրբեջանը մնացել են դեմ հանդիման, եւ արյունահեղությունը շարունակվում է ամեն օր, ավելի է կարեւորվում բանակցությունների սեղանի շուրջը նստելու խնդիրը: Այստեղ կարեւոր դեր են խաղում նաեւ մտավորականության ներկայացուցիչները: Մամուլում արդեն հրապարակվել է, որ հունվարի 6-ին Ադրբեջանի Ղազախի շրջանում հանդիպել են հայ եւ ադրբեջանցի մտավորականներ: Ի՞նչ նպատակ է հետապնդել այդ հանդիպումը, ի՞նչ հարցեր են քննարկվել, ի՞նչ սպասելիքներ կան: Այդ մասին են պատմում հանդիպման մասնակիցներից երկուսը՝ Հրանտ ՄԱԹԵՈՍՅԱՆԸ եւ Վարդգես ՊԵՏՐՈՍՅԱՆԸ:



Հրանտ Մաթեւոսյան.
Գրող, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավոր.

Այդ հանդիպման գաղափարը վաղուց էր հասունացել: Դեռ 1988-ին երկրաշարժից հետո մեր տուն էր զանգահարել ագուլիսցի արձակագիր Ավրամ Այլիսլին: Ես տանը չեմ եղել: Նա խոսել է մեր տանը գտնվող բախվեցի փախստականի հետ, հարցափորձ արել մեր մասին: Հետո, տարիներ անց, Մոսկվայի մեր ընդհանուր ծանոթների միջոցով նա տեղեկացրել էր, որ ցանկանում է հանդիպել մեր գրողների հետ: Այդ հանդիպումը ենթադրվում էր անցկացնել չեզոք գոտում՝ Խարկովում կամ Մոսկվայում եւ այն էլ երրորդ կողմի ներկայությամբ: Ես պնդեցի, որ բացի Հայաստանից եւ Ադրբեջանից այլ տեղ չեմ գնա: Երբ ազնիվ մարդիկ ենք, պատասխանատու ենք ամենալարված շրջանում հանդիպել: Ադրբեջանական կողմը համաձայնեց սահմանի վրա, եւ քանի որ նախաձեռնությունը իրենցն էր, առաջին հանդիպումը նշանակվեց Ղազախի սահմանային ավանում: Անսպասելի էր երրորդ կողմի մաթեմատիկոս Սվետլանա Գաննուշկինայի եւ պատմաբան Ալեքսանդր Դանիելի ներկայությունը, որովհետեւ ըստ նախնական պայմանավորվածության բացառվելու էր երրորդ կողմի մասնակցությունը: Հանդիպման նպատակը բերեւս հանդիպումն էր: Մենք պետք է հաջորդական հանդիպումների սկիզբը դնենք, այս խավարի ու դժոխքի մեջ պետք է ձգտենք անմարդկային չլինել, որպեսզի վաղը, երբ լույսը բացվի, միմյանցից չամաչենք: Խոսելը դժվար չէր: Պարզվեց, որ ընդհանուր շատ բան ունենք: Իհարկե, մեզանից շատերը, ովքեր կորցրել են իրենց հարազատներին, կարող են մեր քայլը դավաճանություն համարել, բայց նրանք էլ պետք է գիտակցեն, որ հար եւ նման փաստարկներ կարող են բերել նաեւ հակառակորդները: Ես խոնարհում եմ իմ գլուխը մեր կորուստների առջեւ, բայց պետք է աշխատենք մեզանից վտարել ուղղափառությունը: Առաջա հանդիպումները մեր կողմի համար շատ ծանր կլինեն, որովհետեւ քչերը ի վիճակի կլինեն թորափել նացիոնալիզմի բեռը: Այնուհանդերձ, անկախ նրանից, թե մյուս պատվիրակությունների կազմում ես կլինեմ թե ոչ, մեր նպատակն է լինելու իրենց գիտակցությանը հասցնել, որ Ղարաբաղը իրենցը չէ, Ղարաբաղը ղարաբաղցիներինն է: Շեշտը կդրվի նաեւ մեր մտավորականության դերի վրա: Մտավորականը իր ժողովրդից չպետք է վախենա, պետք է ասի ճշմարտությունը եւ կարողանա դառնալ ժողովրդական շարժման առաջնորդ: Ես այդ մասին ընդգծված եմ ասում, որովհետեւ տարիներ շարունակ Ադրբեջանում փորձից մինչեւ մեծ դասախարակվել են հակահայկական տրամադրություններով: Եւ հիմա նրանք լավ գիտակցում են, որ եթե հակահայկական շարժումից ժողովրդին ետ քաշեն, ապա այդ սոցիալական շարժումը ուղղվելու է իրենց դեմ, ինչպես եղեռնի ժամանակ Թուրքիայում, կամ օսների հարցում Վրաստանում: Եւ այստեղ մտավորականությունը պետք է նախաձեռնությունը իր ձեռքը վերցնի, թեեւ Ադրբեջանի կառավարությունը ամեն գնով խոչընդոտել է եւ հիմա էլ կդայքարի, որ նախաձեռնությունը չկորցնի: Այդ իմաստով կարեւոր էր հանդիպման մասնակիցների ընդունած Հայաստանի եւ Ադրբեջանի մտավորականության ներկայացուցիչների դիմումը, որ ասվում էր, թե իրավիճակը երկու հանրապետությունների մտավորականությանը պարտավորեցնում է դառնալ մեր ժողովուրդների ցավի արտահայտիչը եւ որոնել հաշտեցման ուղիներ: Եւ շեշտը դնելով մարդասիրության գաղափարի վրա, մենք նախ նրկատի ունենք, որ վիրավորներին չի կարելի սպանել, հիվանդանոցները գնդակոծել, պատանդներին՝ առուծախի առարկա դարձնել: Այդ հայցարարության տեքստը ներկայացրին ադրբեջանցիները, բայց մեր կողմի հատկապես Լեւոն Մկրտչյանի եւ Վարդգես Պետրոսյանի ջանքերով այն փոփոխություններ կրեց: Ինչ վերաբերում է Ղարաբաղի հարցին, ապայժմ դրա քննարկումից խուսափեցինք, որովհետեւ կնշանակեր միանգամից կրնկի վրա շուռ գալ: Ամեն դեպքում հաճելի էր հակառակորդի հետ հանդիպելը: Լավ կլինի, որ մյուս հանդիպումը լինի մեկ ամսից հետո եւ չորս-հինգ ժամի փոխարեն ավելի երկար տեւի:



Վարդգես Պետրոսյան
Գրող, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավոր.

Հանդիպման առաջին արդյունքն այն էր, որ ի վերջո նման հանդիպում կայացավ: Այն առնվազն երեք տարի ուշացումով էր: Հանդիպման գաղափարը, գոնե իմ մեջ, ծագեց 1989-ին, երբ Մոսկվայում Լեռնային Ղարաբաղի հատուկ կառավարման կոմիտեի ստեղծումից հետո ադրբեջանական գրող Միրզա Իբրահիմովի հետ խոսեցինք մեր գրողների հնարավոր հանդիպման մասին: Ես այն ժամանակ մի պայման դրեցի, որ ադրբեջանցի գրողների գոնե մի խումբ հրապարակորեն դատապարտեն Սումգայիթի եղեռնագործությունը: Ես ասացի, որ այդ դատապարտումը ավելի շատ ադրբեջանական ժողովրդին է հարկավոր, որպեսզի նա սահմանազատվի սումգայիթյան մարդասպաններից: Մի քանի շաբաթ անց Իբրահիմովը զանգահարեց եւ ասաց, որ անգամ հինգ-վեց հոգու ստորագրություն չի կարողանում հավաքել: Ես չեմ կարծում, որ եթե այդ հանդիպումը կայանար, հետագա շատ դեպքեր կկանխվեին, բայց այն ինչ-որ նշանակություն կունենար: Ցավոք, դա տեղի չունեցավ, եւ Ադրբեջանի մտավորականությունը սկսեց կուլ գնալ ամբոխին: Անկախ իրադարձությունների հետագա ընթացքից եւ միշտ հիշելով, որ մենք ապրելու ենք կողք-կողքի, մեր խնդիրը պետք է լինի կանգնեցնել փոխադարձ ատելության ծնագունը, եւ ինչպես էլ զարգանան դեպքերը, մեր քաղաքագետները վերջիվերջո նստելու են բանակցությունների սեղանի շուրջը: Պետք է հոգեբանական մթնոլորտը բարենպաստ դարձնենք: Այդ առումով, երեք-չորս տարիների դադարից հետո, այս հանդիպումը ավելի սառն էր, որովհետեւ շատված բաներ կային մեր մեջ: Հանդիպումը ինչ-որ չափով մեղմեց մեր հարաբերությունները՝ եւ դրան նպաստեց այն, որ հենց սկզբից մենք ճիշտ տոն վերցրեցինք: Թեպետ, մեր մասնակիցներից մեկը, շատ համակրելի երիտասարդ դոկտոր Վահագն Գուրզադյանը ասաց, թե առանց զլխավոր, ցավոտ խնդիրների քննարկման որեւէ լուրջ խոսակցություն չի կարող լինել: Էնյա Յունուսովան նրան հակաճառեց, ասելով, թե ավելի ճիշտ կլինի սկսել փոքր հարցերից եւ քայլ առ քայլ հասնել գլխավոր խնդիրներին, քանի որ այստեղ մենք դրանց լուծումը երեւի թե չկարողանանք տալ: Տվյալ դեպքում ես համամիտ էի նրա հետ, որովհետեւ ավելի խոշոր հարցերի քննարկման դեպքում մենք մեր փաստարկները պետք է բերեինք, նրանք իրենց, եւ հանդիպումը առանց որեւէ արդյունքի կընտներ փակուղի: Ես ասացի, որ պատերազմը մենք չենք կարող դադարեցնել, բայց կարող ենք դիմել կռվող կողմերին, որ գոնե չգնդակոծեն դպրոցներն ու հիվանդանոցները: Եւ զրույցը ընթացավ այդ հունով: Գաղափարներ ծագեցին, առաջիկայում կազմակերպել Բաքու-Երեւան հեռուստակամուրջ: Ադրբեջանական կողմից ներկա կինոռեժիսորները ասացին, որ այս տարի կարող են Բաքվում անցկացնել հայկական Ֆիլմերի փառատոն: Եղան առաջարկներ, որ երկու հայ մտավորականներ կարող ենան Բաքվի եւ երկու ադրբեջանցի՝ հայկական հեռուստատեսությամբ: Լեւոն Մկրտչյանն առաջարկեց 10-ական հոդված պատրաստել, հայ հեղինակների հոդվածների մեկնաբանությունները գրեն ադրբեջանցիները, իսկ նրանցը՝ հայերը: Այնուհետեւ այդ 20 հոդվածները հրապարակել մեկ գրքում, որպեսզի ընթերցողը կարողանա խնդրի մասին ճիշտ պատկերացում կազմել: Որոշվեց հանդիպումները դարձնել պարբերական. հաջորդ հանդիպումը կանցկացվի Հայաստանում, իսկ երրորդ հանդիպումը՝ Ստեփանակերտում, որտեղ հայ մտավորականները հնարավորություն կունենան ծանոթանալ ադրբեջանցիների հետ, իսկ ադրբեջանցիները՝ հայերի: Եւ հետո կողք-կողքի նստելով, մեր տեսած ու գրած փաստարկները մեջ բերելով, ավելի իրական հնարավորություն կստեղծվի քննարկելու հիմնական խնդիրները: Երկու կողմերից երեքական մարդ ընտրեցինք, որպեսզի պարբերական կապ պահպանենք եւ ինֆորմացիայի փոխանակման կամ ճշման դեպքում դիմենք միմյանց: Պայմանավորվեցինք նաեւ, որ կարող ենք հերթական ինչ-որ հանդիպում նվիրել որոշակի խնդրի քննարկմանը: Մեր ընդունած դիմումում նշեցինք, որ չենք ցանկանում այսօր փնտրել մեղավորներ եւ անմեղներ, այլ ուզում ենք պատերազմական իրավիճակից դուրս գալու ուղիներ փնտրել: Եւ որպեսզի հոգեբանորեն ցույց տանք մեր հանդուրժողականությունը, դիմումը ստորագրեցինք այբբենական կարգով, այդ մանրամասն իսկ հաստատելով, որ չենք առանձնանում երկու խմբի: Դիմումը ստորագրեցին.

Աբբաս Աբդուլան, Ավրամ Այլիսլին, Ռահման Բաղալովը, Անահիտ Բայանդուրը, Վահագն Գուրզադյանը, Տողրուլ Ջուվարլին, Իբրահիմ Ղուլիեւը, Հրանտ Մաթեւոսյանը, Գրետա Միրզոյանը, Լեւոն Մկրտչյանը, Արշալույս Փաշազյանը, Վարդգես Պետրոսյանը, Սաբիր Ռուստամխանլին, Այազ Սալաեւը, Էնյա Յունուսովան:

Քննարկման ժամանակ ադրբեջանական կողմը ընդունեց մեր բոլոր առարկությունները եւ մասնավորապես այնտեղ, որ նրանք գրում էին, թե *«արդեն քանի տարի է պատերազմ է գնում Ադրբեջանի տարածքում»*, մենք ասացինք, որ դա պետք է ձեւափոխվի. *«պատերազմ է գնում հայերի եւ ադրբեջանցիների միջեւ»*: Իհարկե, նրանք մեր ենթատեքստը հասկացան, բայց չառարկեցին: Մենք համոզվեցինք, որ հանդիպումը կարեւոր էր: Ադրբեջանցիներն անգամ հիշատակեցին, որ դեռ դարասկզբին հայ-ադրբեջանական ընդհարումների ժամանակ Հ. Թումանյանը սպիտակ ձին հեծած գնում էր եւ հայկական, եւ ադրբեջանական գյուղերը ու փորձում հաշտեցնել: Գրողի առաքելությունը հենց այդ է, եւ իմ կարծիքով սպիտակ ձիերի ժամանակը չի անցել: Մենք այսօր քննարկման նյութ չպետք է դարձնենք, թե այդ կոչը ինչքանով է անկեղծ, որովհետեւ դա էլ ինչ-որ տեղ դիվանագիտություն է: Մենք պետք է ելնենք այն համոզմունքից, որ այսօր ադրբեջանական կողմը ավելի է պատրաստ բանակցություններին, որովհետեւ մեր դիմադրության շարժումը Ղարաբաղում նշանակալից հաղթանակներ է արձանագրում: Դա մեզ հիմք է տալիս իրենց ասելու, որ եթե չլինեն բանակցությունները, ապա դա է հեռանկարը: Այդ դեպքում նրանք ավելի պատրաստ կլինեն գնալ զիջումների եւ իրենց ժողովրդին բացատրելու, թե ինչ է իրենց ըստ ասվում: Մենք պետք է փորձենք կանխել այն անդունդի գոյացումը, որի վրա հետո հնարավոր չի լինի կամուրջ գցել: Հուսանք, որ հաջորդ հանդիպումը ավելի արդյունավետ կանցնի եւ կլուսաբանվի ճիշտ ժամանակին:

պատրաստեց
Հակոբ ԱՍԱՏՐՅԱՆԸ

«Քարկացկոս» նախարարը եւ «նեղացկոս» խմբագիրները

Մի քանի շաբաթ առաջ խմբագրությունն ստացավ **«Ժողովրդային պայքար»** թերթը, որն արդեն 10 տարուց ավելի լույս է տեսնում Աբեղնում, որպես **«Հայկական ժողովրդային շարժման»** պատգամավորական թերթ:

Թերթի 1991 թ. 27 նոյեմբեր-17 դեկտեմբեր համարում տպագրված էր մի փոքրիկ հոդված **«Ազգային առաքելություն»** վերնագրով, որտեղ խոսվում է ՀՀ Պատգամավորության նախարար պրն. Վազգեն Սարգսյանի մասին: Այնտեղ մասնավորապես ասվում էր.

«Նոյեմբերի սկզբներին գաղտնի առաքելությամբ Աբեղնի ժամանած էր Հայաստանի Գերագույն խորհրդի Ազգային պատգամավորական հանձնաժողովի նախագահ, նախապես մարզիկ, այժմ հետախուզական բնույթի գործերով զբաղող Վազգեն Սարգսեան:

Ան իր կեցութիւնն աղահոված է աբեղահայ վաճառականի մը տան մէջ, որ կգտնուի Աբեղնի շրջան եւ գործատէրերու առանձնատուներուն համար սահմանուած արուարձանի մը մէջ:

Իր Հունաստան կեցութեան ընթացքին, Վազգէն Սարգսեան անձամբ հետաքնդման տակ առած է Հայկական ժողովրդային շարժման գրասենեակը, իմանալու համար հոն այցելողներուն իմնութիւնը:

Հայաստան վերադարձին այս պարոնը հետախուզութեան տեղեկագիրը ներկայացուցած է իր մեծաւորներուն:

Չենք գիտեր, թէ պրն. Վազգէն Սարգսեանը Հայկական ժողովրդային շարժման գրասենեակը հետաքնդելով ազգային որ վե՞հ նպատակին ծառայած կրնայ ըլլալ, այսուամենայնիւ նշեալ անձին եւ իր հարգելի մեծաւորներուն կը հիշեցնենք, որ նախորդ վարչակարգի օրոք ալ նման փորձեր կատարուած են, բայց ոչ հետախուզական պետերու անձնական մասնակցութեամբ: Հաւանաբար այս պարագան չափանիշ մը հանդիսանայ Հայաստանի վարչակարգէն ներս արձանագրուած փոփոխութեանց:

Անշուշտ պրն. Սարգսեանի «խիստ գաղտնի» եւ խիստ «ազգային» առաքելութիւնը ժամանակագրօրէն կզուգադիպի, արդէն չարաշուք անվանուելու չափ տխրայիշատակ նոյեմբերի առաջին օրերուն, որու ընթացքին, Հայաստանի, Անկարայի, Ուաշինգթընի մէջ եւ այլուր, թուրք-հայկական սակարկութեանց գործընթացը թափ առած էր:

Պրն. Վազգէն Սարգսեան հաւանաբար Հայաստանի, բայց մանաւանդ Արցախի ազգային աղահովութեան եւ անվտանգութեան հարցերը լուծած ըլլալով, լծուած է արտաքին հայկական հեռուստատեսությամբ: Լեւոն Մկրտչյանն առաջարկեց 10-ական հոդված պատրաստել, հայ հեղինակների հոդվածների մեկնաբանությունները գրեն ադրբեջանցիները, իսկ նրանցը՝ հայերը: Այնուհետեւ այդ 20 հոդվածները հրապարակել մեկ գրքում, որպեսզի ընթերցողը կարողանա խնդրի մասին ճիշտ պատկերացում կազմել: Որոշվեց հանդիպումները դարձնել պարբերական. հաջորդ հանդիպումը կանցկացվի Հայաստանում, իսկ երրորդ հանդիպումը՝ Ստեփանակերտում, որտեղ հայ մտավորականները հնարավորություն կունենան ծանոթանալ ադրբեջանցիների հետ, իսկ ադրբեջանցիները՝ հայերի: Եւ հետո կողք-կողքի նստելով, մեր տեսած ու գրած փաստարկները մեջ բերելով, ավելի իրական հնարավորություն կստեղծվի քննարկելու հիմնական խնդիրները: Երկու կողմերից երեքական մարդ ընտրեցինք, որպեսզի պարբերական կապ պահպանենք եւ ինֆորմացիայի փոխանակման կամ ճշման դեպքում դիմենք միմյանց: Պայմանավորվեցինք նաեւ, որ կարող ենք հերթական ինչ-որ հանդիպում նվիրել որոշակի խնդրի քննարկմանը: Մեր ընդունած դիմումում նշեցինք, որ չենք ցանկանում այսօր փնտրել մեղավորներ եւ անմեղներ, այլ ուզում ենք պատերազմական իրավիճակից դուրս գալու ուղիներ փնտրել: Եւ որպեսզի հոգեբանորեն ցույց տանք մեր հանդուրժողականությունը, դիմումը ստորագրեցինք այբբենական կարգով, այդ մանրամասն իսկ հաստատելով, որ չենք առանձնանում երկու խմբի: Դիմումը ստորագրեցին.

Աբբաս Աբդուլան, Ավրամ Այլիսլին, Ռահման Բաղալովը, Անահիտ Բայանդուրը, Վահագն Գուրզադյանը, Տողրուլ Ջուվարլին, Իբրահիմ Ղուլիեւը, Հրանտ Մաթեւոսյանը, Գրետա Միրզոյանը, Լեւոն Մկրտչյանը, Արշալույս Փաշազյանը, Վարդգես Պետրոսյանը, Սաբիր Ռուստամխանլին, Այազ Սալաեւը, Էնյա Յունուսովան:

Քննարկման ժամանակ ադրբեջանական կողմը ընդունեց մեր բոլոր առարկությունները եւ մասնավորապես այնտեղ, որ նրանք գրում էին, թե *«արդեն քանի տարի է պատերազմ է գնում Ադրբեջանի տարածքում»*, մենք ասացինք, որ դա պետք է ձեւափոխվի. *«պատերազմ է գնում հայերի եւ ադրբեջանցիների միջեւ»*: Իհարկե, նրանք մեր ենթատեքստը հասկացան, բայց չառարկեցին: Մենք համոզվեցինք, որ հանդիպումը կարեւոր էր: Ադրբեջանցիներն անգամ հիշատակեցին, որ դեռ դարասկզբին հայ-ադրբեջանական ընդհարումների ժամանակ Հ. Թումանյանը սպիտակ ձին հեծած գնում էր եւ հայկական, եւ ադրբեջանական գյուղերը ու փորձում հաշտեցնել: Գրողի առաքելությունը հենց այդ է, եւ իմ կարծիքով սպիտակ ձիերի ժամանակը չի անցել: Մենք այսօր քննարկման նյութ չպետք է դարձնենք, թե այդ կոչը ինչքանով է անկեղծ, որովհետեւ դա էլ ինչ-որ տեղ դիվանագիտություն է: Մենք պետք է ելնենք այն համոզմունքից, որ այսօր ադրբեջանական կողմը ավելի է պատրաստ բանակցություններին, որովհետեւ մեր դիմադրության շարժումը Ղարաբաղում նշանակալից հաղթանակներ է արձանագրում: Դա մեզ հիմք է տալիս իրենց ասելու, որ եթե չլինեն բանակցությունները, ապա դա է հեռանկարը: Այդ դեպքում նրանք ավելի պատրաստ կլինեն գնալ զիջումների եւ իրենց ժողովրդին բացատրելու, թե ինչ է իրենց ըստ ասվում: Մենք պետք է փորձենք կանխել այն անդունդի գոյացումը, որի վրա հետո հնարավոր չի լինի կամուրջ գցել: Հուսանք, որ հաջորդ հանդիպումը ավելի արդյունավետ կանցնի եւ կլուսաբանվի ճիշտ ժամանակին:

պատրաստեց
Հակոբ ԱՍԱՏՐՅԱՆԸ

«Քարկացկոս» նախարարը եւ «նեղացկոս» խմբագիրները

Մի քանի շաբաթ առաջ խմբագրությունն ստացավ **«Ժողովրդային պայքար»** թերթը, որն արդեն 10 տարուց ավելի լույս է տեսնում Աբեղնում, որպես **«Հայկական ժողովրդային շարժման»** պատգամավորական թերթ:

Թերթի 1991 թ. 27 նոյեմբեր-17 դեկտեմբեր համարում տպագրված էր մի փոքրիկ հոդված **«Ազգային առաքելություն»** վերնագրով, որտեղ խոսվում է ՀՀ Պատգամավորության նախարար պրն. Վազգեն Սարգսյանի մասին: Այնտեղ մասնավորապես ասվում էր.

«Նոյեմբերի սկզբներին գաղտնի առաքելությամբ Աբեղնի ժամանած էր Հայաստանի Գերագույն խորհրդի Ազգային պատգամավորական հանձնաժողովի նախագահ, նախապես մարզիկ, այժմ հետախուզական բնույթի գործերով զբաղող Վազգէն Սարգսեան:

Ան իր կեցութիւնն ապահոված է աբեղահայ վաճառականի մը տան մէջ, որ կգտնուի Աբեղնի շրջան եւ գործատէրերու առանձնատուներուն համար սահմանուած արուարձանի մը մէջ:

Իր Հունաստան կեցութեան ընթացքին, Վազգէն Սարգսեան անձամբ հետաքնդման տակ առած է Հայկական ժողովրդային շարժման գրասենեակը, իմանալու համար հոն այցելողներուն իմնութիւնը:

Հայաստան վերադարձին այս պարոնը հետախուզութեան տեղեկագիրը ներկայացուցած է իր մեծաւորներուն:

Չենք գիտեր, թէ պրն. Վազգէն Սարգսեանը Հայկական ժողովրդային շարժման գրասենեակը հետաքնդելով ազգային որ վե՞հ նպատակին ծառայած կրնայ ըլլալ, այսուամենայնիւ նշեալ անձին եւ իր հարգելի մեծաւորներուն կը հիշեցնենք, որ նախորդ վարչակարգի օրոք ալ նման փորձեր կատարուած են, բայց ոչ հետախուզական պետերու անձնական մասնակցութեամբ: Հաւանաբար այս պարագան չափանիշ մը հանդիսանայ Հայաստանի վարչակարգէն ներս արձանագրուած փոփոխութեանց:

Անշուշտ պրն. Սարգսեանի «խիստ գաղտնի» եւ խիստ «ազգային» առաքելութիւնը ժամանակագրօրէն կզուգադիպի, արդէն չարաշուք անվանուելու չափ տխրայիշատակ նոյեմբերի առաջին օրերուն, որու ընթացքին, Հայաստանի, Անկարայի, Ուաշինգթընի մէջ եւ այլուր, թուրք-հայկական սակարկութեանց գործընթացը թափ առած էր:

Պրն. Վազգէն Սարգսեան հաւանաբար Հայաստանի, բայց մանաւանդ Արցախի ազգային ապահովութեան եւ անվտանգութեան հարցերը լուծած ըլլալով, լծուած է արտաքին հայկական հեռուստատեսությամբ: Լեւոն Մկրտչյանն առաջարկեց 10-ական հոդված պատրաստել, հայ հեղինակների հոդվածների մեկնաբանությունները գրեն ադրբեջանցիները, իսկ նրանցը՝ հայերը: Այնուհետեւ այդ 20 հոդվածները հրապարակել մեկ գրքում, որպեսզի ընթերցողը կարողանա խնդրի մասին ճիշտ պատկերացում կազմել: Որոշվեց հանդիպումները դարձնել պարբերական. հաջորդ հանդիպումը կանցկացվի Հայաստանում, իսկ երրորդ հանդիպումը՝ Ստեփանակերտում, որտեղ հայ մտավորականները հնարավորություն կունենան ծանոթանալ ադրբեջանցիների հետ, իսկ ադրբեջանցիները՝ հայերի: Եւ հետո կողք-կողքի նստելով, մեր տեսած ու գրած փաստարկները մեջ բերելով, ավելի իրական հնարավորություն կստեղծվի քննարկելու հիմնական խնդիրները: Երկու կողմերից երեքական մարդ ընտրեցինք, որպեսզի պարբերական կապ պահպանենք եւ ինֆորմացիայի փոխանակման կամ ճշման դեպքում դիմենք միմյանց: Պայմանավորվեցինք նաեւ, որ կարող ենք հերթական ինչ-որ հանդիպում նվիրել որոշակի խնդրի քննարկմանը: Մեր ընդունած դիմումում նշեցինք, որ չենք ցանկանում այսօր փնտրել մեղավորներ եւ անմեղներ, այլ ուզում ենք պատերազմական իրավիճակից դուրս գալու ուղիներ փնտրել: Եւ որպեսզի հոգեբանորեն ցույց տանք մեր հանդուրժողականությունը, դիմումը ստորագրեցինք այբբենական կարգով, այդ մանրամասն իսկ հաստատելով, որ չենք առանձնանում երկու խմբի: Դիմումը ստորագրեցին.

Աբբաս Աբդուլան, Ավրամ Այլիսլին, Ռահման Բաղալովը, Անահիտ Բայանդուրը, Վահագն Գուրզադյանը, Տողրուլ Ջուվարլին, Իբրահիմ Ղուլիեւը, Հրանտ Մաթեւոսյանը, Գրետա Միրզոյանը, Լեւոն Մկրտչյանը, Արշալույս Փաշազյանը, Վարդգես Պետրոսյանը, Սաբիր Ռուստամխանլին, Այազ Սալաեւը, Էնյա Յունուսովան:

Քննարկման ժամանակ ադրբեջանական կողմը ընդունեց մեր բոլոր առարկությունները եւ մասնավորապես այնտեղ, որ նրանք գրում էին, թե *«արդեն քանի տարի է պատերազմ է գնում Ադրբեջանի տարածքում»*, մենք ասացինք, որ դա պետք է ձեւափոխվի. *«պատերազմ է գնում հայերի եւ ադրբեջանցիների միջեւ»*: Իհարկե, նրանք մեր ենթատեքստը հասկացան, բայց չառարկեցին: Մենք համոզվեցինք, որ հանդիպումը կարեւոր էր: Ադրբեջանցիներն անգամ հիշատակեցին, որ դեռ դարասկզբին հայ-ադրբեջանական ընդհարումների ժամանակ Հ. Թումանյանը սպիտակ ձին հեծած գնում էր եւ հայկական, եւ ադրբեջանական գյուղերը ու փորձում հաշտեցնել: Գրողի առաքելությունը հենց այդ է, եւ իմ կարծիքով սպիտակ ձիերի ժամանակը չի անցել: Մենք այսօր քննարկման նյութ չպետք է դարձնենք, թե այդ կոչը ինչքանով է անկեղծ, որովհետեւ դա էլ ինչ-որ տեղ դիվանագիտություն է: Մենք պետք է ելնենք այն համոզմունքից, որ այսօր ադրբեջանական կողմը ավելի է պատրաստ բանակցություններին, որովհետեւ մեր դիմադրության շարժումը Ղարաբաղում նշանակալից հաղթանակներ է արձանագրում: Դա մեզ հիմք է տալիս իրենց ասելու, որ եթե չլինեն բանակցությունները, ապա դա է հեռանկարը: Այդ դեպքում նրանք ավելի պատրաստ կլինեն գնալ զիջումների եւ իրենց ժողովրդին բացատրելու, թե ինչ է իրենց ըստ ասվում: Մենք պետք է փորձենք կանխել այն անդունդի գոյացումը, որի վրա հետո հնարավոր չի լինի կամուրջ գցել: Հուսանք, որ հաջորդ հանդիպումը ավելի արդյունավետ կանցնի եւ կլուսաբանվի ճիշտ ժամանակին:

պատրաստեց
Հակոբ ԱՍԱՏՐՅԱՆԸ

«Քարկացկոս» նախարարը եւ «նեղացկոս» խմբագիրները

Մի քանի շաբաթ առաջ խմբագրությունն ստացավ **«Ժողովրդային պայքար»** թերթը, որն արդեն 10 տարուց ավելի լույս է տեսնում Աբեղնում, որպես **«Հայկական ժողովրդային շարժման»** պատգամավորական թերթ:

Թերթի 1991 թ. 27 նոյեմբեր-17 դեկտեմբեր համարում տպագրված էր մի փոքրիկ հոդված **«Ազգային առաքելություն»** վերնագրով, որտեղ խոսվում է ՀՀ Պատգամավորության նախարար պրն. Վազգեն Սարգսյանի մասին: Այնտեղ մասնավորապես ասվում էր.

«Նոյեմբերի սկզբներին գաղտնի առաքելությամբ Աբեղնի ժամանած էր Հայաստանի Գերագույն խորհրդի Ազգային պատգամավորական հանձնաժողովի նախագահ, նախապես մարզիկ, այժմ հետախուզական բնույթի գործերով զբաղող Վազգէն Սարգսեան:

Ան իր կեցութիւնն ապահոված է աբեղահայ վաճառականի մը տան մէջ, որ կգտնուի Աբեղնի շրջան եւ գործատէրերու առանձնատուներուն համար սահմանուած արուարձանի մը մէջ:

Իր Հունաստան կեցութեան ընթացքին, Վազգէն Սարգսեան անձամբ հետաքնդման տակ առած է Հայկական ժողովրդային շարժման գրասենեակը, իմանալու համար հոն այցելողներուն իմնութիւնը:

Հայաստան վերադարձին այս պարոնը հետախուզութեան տեղեկագիրը ներկայացուցած է իր մեծաւորներուն:

Չենք գիտեր, թէ պրն. Վազգէն Սարգսեանը Հայկական ժողովրդային շարժման գրասենեակը հետաքնդելով ազգային որ վե՞հ նպատակին ծառայած կրնայ ըլլալ, այսուամենայնիւ նշեալ անձին եւ իր հարգելի մեծաւորներուն կը հիշեցնենք, որ նախորդ վարչակարգի օրոք ալ նման փորձեր կատարուած են, բայց ոչ հետախուզական պետերու անձնական մասնակցութեամբ: Հաւանաբար այս պարագան չափանիշ մը հանդիսանայ Հայաստանի վարչակարգէն ներս արձանագրուած փոփոխութեանց:

Անշուշտ պրն. Սարգսեանի «խիստ գաղտնի» եւ խիստ «ազգային» առաքելութիւնը ժամանակագրօրէն կզուգադիպի, արդէն չարաշուք անվանուելու չափ տխրայիշատակ նոյեմբերի առաջին օրերուն, որու ընթացքին, Հայաստանի, Անկարայի, Ուաշինգթընի մէջ եւ այլուր, թուրք-հայկական սակարկութեանց գործընթացը թափ առած էր:

Պրն. Վազգէն Սարգսեան հաւանաբար Հայաստանի, բայց մանաւանդ Արցախի ազգային ապահովութեան եւ անվտանգութեան հարցերը լուծած ըլլալով, լծուած է արտաքին հայկական հեռուստատեսությամբ: Լեւոն Մկրտչյանն առաջարկեց 10-ական հոդված պատրաստել, հայ հեղինակների հոդվածների մեկնաբանությունները գրեն ադրբեջանցիները, իսկ նրանցը՝ հայերը: Այնուհետեւ այդ 20 հոդվածները հրապարակել մեկ գրքում, որպեսզի ընթերցողը կարողանա խնդրի մասին ճիշտ պատկերացում կազմել: Որոշվեց հանդիպումները դարձնել պարբերական. հաջորդ հանդիպումը կանցկացվի Հայաստանում, իսկ երրորդ հանդիպումը՝ Ստեփանակերտում, որտեղ հայ մտավորականները հնարավորություն կունենան ծանոթանալ ադրբեջանցիների հետ, իսկ ադրբեջանցիները՝ հայերի: Եւ հետո կողք-կողքի նստելով, մեր տեսած ու գրած փաստարկները մեջ բերելով, ավելի իրական հնարավորություն կստեղծվի քննարկելու հիմնական խնդիրները: Երկու կողմերից երեքական մարդ ընտրեցինք, որպեսզի պարբերական կապ պահպանենք եւ ինֆորմացիայի փոխանակման կամ ճշման դեպքում դիմենք միմյանց: Պայմանավորվեցինք նաեւ, որ կարող ենք հերթական ինչ-որ հանդիպում նվիրել որոշակի խնդրի քննարկմանը: Մեր ընդունած դիմումում նշեցինք, որ չենք ցանկանում այսօր փնտրել մեղավորներ եւ անմեղներ, այլ ուզում ենք պատերազմական իրավիճակից դուրս գալու ուղիներ փնտրել: Եւ որպեսզի հոգեբանորեն ցույց տանք մեր հանդուրժողականությունը, դիմումը ստորագրեցինք այբբենական կարգով, այդ մանրամասն իսկ հաստատելով, որ չենք առանձնանում երկու խմբի: Դիմումը ստորագրեցին.

Աբբաս Աբդուլան, Ավրամ Այլիսլին, Ռահման Բաղալովը, Անահիտ Բայանդուրը, Վահագն Գուրզադյանը, Տողրուլ Ջուվարլին, Իբրահիմ Ղուլիեւը, Հրանտ Մաթեւոսյանը, Գրետա Միրզոյանը, Լեւոն Մկրտչյանը, Արշալույս Փաշազյանը, Վարդգես Պետրոսյանը, Սաբիր Ռուստամխանլին, Այազ Սալաեւը, Էնյա Յունուսովան:

Քննարկման ժամանակ ադրբեջանական կողմը ընդունեց մեր բոլոր առարկությունները եւ մասնավորապես այնտեղ, որ նրանք գրում էին, թե *«արդեն քանի տարի է պատերազմ է գնում Ադրբեջանի տարածքում»*, մենք ասացինք, որ դա պետք է ձեւափոխվի. *«պատերազմ է գնում հայերի եւ ադրբեջանցիների միջեւ»*: Իհարկե, նրանք մեր ենթատեքստը հասկացան, բայց չառարկեցին: Մենք համոզվեցինք, որ հանդիպումը կարեւոր էր: Ադրբեջանցիներն անգամ հիշատակեցին, որ դեռ դարասկզբին հայ-ադրբեջանական ընդհարումների ժամանակ Հ. Թումանյանը սպիտակ ձին հեծած գնում էր եւ հայկական, եւ ադրբեջանական գյուղերը ու փորձում հաշտեցնել:

Կառավարման նախագահական եղանակը

կամ ճանաղարհ դեպի քաղաքացիական հասարակություն

Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաեւ մյուս երիտասարդ ժողովրդավարական կազմավորումներում, գործադիր իշխանության ուժեղացման պարտադրումը կառավարման նախագահական եղանակի անհրաժեշտություն առաջացրեց, որի գործադիր գերագույն մարմինը ընտրվում է ժողովրդի կողմից անմիջականորեն՝ օրենսդիր մարմինների ընտրությունից անկախ: Դա տեղի ունեցավ նաեւ այն պատճառով, որ ավելի քան երկու հարյուր տարի ԱՄՆ-ում դեմոկրատական երկրի այդօրինակ կառուցվածքը դրականորեն է իրեն դրսեւորում, իհարկե, հասարակության պահանջներին համապատասխան զարգանալով եւ ձեւափոխվելով, բայց իր հիմնական էությունը պահպանելով: Հենց այս վերջինն էլ նրա կենսունակության լավագույն ապացույցն է: Եվ այդ հարմարվելու եւ արագ զարգացման ընդունակությունը ԱՄՆ-ի կառավարման «վերապահությունների եւ հակակշիռների» մեխանիզմի ժառանգությունն է, որն իր հերթին աշխատում է *«ամեն մի ամբիցիա պետք է ետ պահվի ուրիշ ամբիցիայով»* սկզբունքի համաձայն, որը դեռեւս 1787 թ. ամերիկյան սահմանադրության հիմնադիրներից մեկն է:

Որոնեզի Հայաստանում խուսափենք նախագահական իշխանության անցանկալի զարգացումից, մեզ նույնպես անհրաժեշտ է նրանում մտցնել մեր «վերապահությունների եւ հակակշիռների կարգը», որը նպաստում է իշխանություններում ինքնակարգավորվող հասատում ժողովրդավարության բնաբերությանը:

Այսպիսի հարցադրումը պատահական չէ: ԱՄՆ-ում նախագահն իր պետական-սահմանադրական կարգավիճակով միաժամանակ պետության ղեկավար է, կառավարության ղեկավար, զինված ուժերի գերագույն հրամանատար, արտաքին քաղաքականության վարող, նրան իրավունք է վերապահված կնքել միջազգային պայմանագրեր՝ ներկա սենատորների երկու երրորդի համաձայնության պայմաններում, սենատի խորհրդի եւ համաձայնության համաստասխան նշանակել դեսպաններ եւ այլ լիազորված անձանց:

Այսպիսով, առկա է մեկ ձեռքում կենտրոնացած ահռելի իշխանություն, որն ակնհայտ է, ժողովրդավարության պահպանության համար պետք է լրացվի նույնքան ուժեղ «վերապահությունների եւ հակակշիռների» համակարգով:

Իշխանության այդպիսի ահռելի կենտրոնացման պայմաններում, որքան էլ առաջին հայացքից սարսափելի է, բայց հենց ամերիկյան կոնգրեսն է առավել աշխատունակ օրենսդիր մարմինն աշխարհում: Ամենայն հավանականությամբ, դա ուժեղ նախագահական իշխանությանը համաստասխան նրա զարգացման հետեւանքն է: Դրան նպաստում է օրինաստահությանը մեսաստես եւ ակտիվորեն կոնգրեսի հետեւելը: Գործադիր մարմինների նկատմամբ հսկողության մեխանիզմի կարեւորագույն մասերից մեկը պետական ծառայողներից տեղեկատվություն պահանջելու իրավունքն է, ինչպես նաեւ բյուրոկրատական համակարգում ֆինանսական սուգումներ անցկացնելու իրավունքը: Պալատներից յուրաքանչյուրը կարող է մեղադրել պետական պաշտոնյային տեղեկություն չտալու համար, եւ այդ ժամանակ գործը քննում է Ֆեդերալ դատարանը:

«Վերապահությունների եւ հակակշիռների» համակարգի մյուս կողմը: Նախագահին, որպես գերագույն գործադիր մարմնի ենթարկվում է Ֆեդերալ նախարարությունների ծառայողների մի ահռելի՝ երեք միլիոնանոց բանակ: Այդ բյուրոկրատական ահռելի բուրգի վերին մասը փոխվում է ուրիշ կուսակցության իշխանության գլուխ անցնելիս: Դրանք մոտ 600 քաղաքական հայտնի պաշտոններ են, որոնց թեկնածությունները տալիս է նախագահը: Սակայն պաշտոնյային նախագահը չի կարող հեռացնել աշխատանքից քաղաքական մոտիվներով, 1883 թ. քաղաքացիական ծառայության մասին օրենքի համաձայն: Այդ նույն օրենքը պաշտոնյայից պահանջում է քաղաքական չեզոքություն վերադասի նկատմամբ:

Որոնեզի ցույց տանք, թե ինչ մակարդակով է աշխատում այդ օրենքը, բերենք հանրահայտ օրինակը: Նախագահ Ռ. Նիքսոնն իր երջանասորդներին հենվելով, փորձեց միանձնյա իշխանության անցնել: Նրանք ցանկանում էին գլխավոր նախարարական պաշտոնները մտցնել նախագահական աղարատի մեջ, այսինքն՝ կոնգրեսի հսկողությունից ազատել: Սկսվեցին անհարմար պաշտոնյաների անօրինական հալածանքները: Դրանից բացի, պարզվեց, որ նախագահն ու իր կողմնակիցները պարբերաբար կիրառել են անօրինական մեթոդներ քաղաքական հակառակորդների նկատմամբ՝ «Ուոթերգեյթյան աղմուկը»: Այդ գործողություններին անմիջապես դեմ կանգնեց կոնգրեսը: Իսկ երբ Նիքսոնը 1973 թ. հոկտեմբերին հեռացրեց հատուկ դատախազ Ա. Կոքսին, որն իմքնուրույն էր տարել այդ աղմուկի հետաքննությունը, որն իր հերթին ընդունվեց որպես իրեն օրենքից բարձր դնելու փորձ նախագահի կողմից, նրա դեմ ներկայացուցիչների պալատի իրավաբանների հանձնաժողովի կողմից սկսվեց իմնիչմենտի գործընթացը, որն էլ հասցրեց նրա հրաժարականին:

«Վերապահությունների եւ հակակշիռների» համակարգի եւս մեկ կողմը: Գոյություն ունեն մի շարք ազդեցիկ խմբեր, որոնց գործունեությունը նույնպես օրենքի հսկողության տակ է: Հնարավոր է, որ մեր բնապահպանական, բարեգործական եւ այլ շարժումները ժամանակի ընթացքում կդառնան այդպիսի խմբեր:

Իր հերթին, այդպիսի խմբերի գործունեության համար անհրաժեշտ է հասարակության բավական զարգացվածություն, քանի որ այդ խմբերը կազմվում են շահագրգռված մարդկանցից եւ ֆինանսավորվում են նրանց կողմից: Կարեւոր է, որ նրանք լրիվ անկախ են պետությունից, եւ դրանում է նրանց ուժը: Օրինակ, 1991 թ. օգոստոսի 19-ին այդպիսի խումբ կազմվեց մոսկովյան գործարար մարդկանց անձնական մասնակցությամբ: Նրանք իրենց միջոցներով կանգնեցին Սպիտակ տան պաշտպանների շարքերում: Նույն նրանք, որոշ ժամանակ անց, միահամուռ կերպով դեմ դուրս եկան իրենց իրավունքները ոտնահարող Ելցինի որոշման դեմ: Բայց դա դեռ բոլորը չէ: «Վերապահությունների եւ հակակշիռների» համակարգի նորմալ աշխատանքի համար անհրաժեշտ են լավ աշխատող, հասատատուն տեղեկատվական աղբյուրներ՝ մամուլ, հեռուստատեսություն եւ այլն:

Օրինակ բերենք ամերիկյան իրավաբան Ռալֆ Նայդերին: Նա հետաքրքրվեց ավտոմոբիլների վտանգավորության խնդրով, պարզեց, որ մեքենաների վտանգավորությունը մեծամասամբ կախված է գործարանային թերություններից: Նա գրեց մի գիրք *«Անվտանգ չեն ցանկացած արագության դեպքում»* վերնագրով եւ ստիպեց ավտոգիգանտներին վերանորոգել արդեն վաճառված մեքենաները: Այսպես ստեղծվեցին եւ այլ շարժումներ, որոնք պաշտպանում են զնորդի շահերը:

Պարզ է, որ այդ համակարգի գործունեության համար անհրաժեշտ է նաեւ հզոր, անկախ դատավարական համակարգ, որը լինելով բյուրոկրատական աղարատի մի մաս, լինի նաեւ անկողմնակալ: Մյուս կողմից, այն պետք է հնարավորություն ունենա օրենքի առաջ կանգնեցնելու ցանկացած մարդու, նույնիսկ նախագահին:

Ինչպիսի՞ առաջնահերթ խնդիրներ են կանգնած մեր խորհրդարանի առաջ: Պետք է հավի առնել, որ ոչ մի «արեւմտյան» ժողովրդավարություն գործ չի ունեցել այնպիսի ահռելի պետական բյուրոկրատիայի հետ, ինչին որ հանդիպել են այսօր երիտասարդ ժողովրդավարները:

Եթե մենք ուզում ենք խուսափել ծայրահեղություններից, որոնեզի խորհրդարանի հսկողությունը չափից ավելի չլինի, եթե մենք ուզում ենք, որ մեր խորհրդարանը միայն կողմ չքվեարկի բյուրոկրատիայի առաջարկություններին, եթե մենք չենք ուզում, որ ցանկացած առաջարկություն անվերջանալի վեճերով անգործության մատնվի, մենք պետք է ստեղծենք խորհրդարանի եւ պետական աղարատի համագործակցության համակարգ, ինչպիսին ԱՄՆ-ում է:

Դրա համար պետք է, որ բոլոր քաղաքական ուժերը ունենան իրենց ներկայացուցչական խմբերը, որոնք պետք է հսկեն պետական աղարատի գործունեությունը՝ առանց միջամտելու եւ խանգարելու նրա աշխատանքին, ինչպես դա արվում է Հունգարիայում:

Վլադիմիր ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Յուրի ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Քաղաքականությունը տնտեսություն չէ, իսկ տնտեսությունը քաղաքականություն է

Արագ իրականացվող քաղաքական ու տընտեսական փոփոխությունները երբեմն հնարավորություն չեն ընձեռնում նույնչափ արագ անդրադառնալ մեզ համար դեռեւս ոչ լիարժեք հասկանալի երեւույթների վերլուծությանը: Նախկին ԽՍՀՄ հանրապետությունները Մինսկում, հետո Ալմա-Աթայում հիմնադրեցին Անկախ պետությունների հանրակցությունը, ազդարարելով ԽՍՀՄ-ի որպես միասնական պետության գոյության ավարտը:

Ի՞նչ է Անկախ պետությունների հանրակցությունը, ի՞նչ հույս եւ հեռանկարներ կարելի է կապել նրա հետ: Նախ, դեռ հարց է՝ կկայանա՞, արդյոք, այդ հանրակցությունը: Դեռեւս լիով չկազմավորված հանրակցության մեջ մտնող երկրների միջեւ կան խոր հակասություններ զինված ուժերի, ընդհանուր տնտեսական տարածքի եւ այլ սկզբունքային հարցերի վերաբերյալ: Երկրորդ՝ Անկախ պետությունների հանրակցություն կազմավորումը իր իսկական իմաստով ոչ թե մոտ է եւրոպական երկրների համագործակցությանը, որում ընդգրկված են իրոք անկախ պետություններ, այլեւ ավելի շատ նման է Բրիտանական երկրների համագործակցությանը, որն ստեղծվեց Բրիտանական կայսրության քայքայումից հետո եւ մինչեւ նրա մեջ մտնող երկրները (Հնդկաստան, Պակիստան եւ այլն) լրիվ կանկախանային՝ անցան դժվարին փորձությունների ճանապարհ, որը զուգակցվեց արյունահեղությամբ: Արդ, դեռեւս վաղ է հաղթանակի դափնիներ բաժանելը: Անկախության պայքարի հաջող հանգրվանը սկսվում է նեղաղուրացման դեմ պայքարով: Իսկ վերջինիս սկիզբը նախանշվեց, երբ Հայաստանը իրականացնելով տնտեսական բարեփոխման իր ծրագիրը, անցավ այսպես կոչված գների ազատականացման:

Ինչ խոսք, որ գների բաց թողումը շուկային անցնելու կարեւոր միջոց է, եթե այն պայմանավորված է ազատ մրցակցությունը: Մի բան, որն ընդհանրապես ԽՍՀՄ նախկին հանրապետություններում (Հայաստանը մասամբ բացառություն է կազմում), իսկ Ռուսաստանում մասնավորապես չի կարող տեղի ունենալ, քանզի ազատ մրցակցությունն անհնար է առանց լայնածավալ սեփականաշնորհման իրականացման: Այստեղից դժվար չէ կռահել, որ գների ազատականացման ներկայիս ընթացքը կաղ չանի քաղաքակիրթ շուկայի հետ եւ ոչ այլ ինչ է, եթե ոչ գների աղետաբեր բարձրացում: Երեւույթը կարող է աղետաբեր լինել մասնավորապես այն հանրապետությունների համար, որոնք չունեն ստրատեգիական հումքի աղբյուրներ: Ես նկատի ունեմ մասնավորապես Հայաստանը, որ այդ տեսակետից ոչինչ չունի:

Ի դեպ, երբ Բորիս Ելցինը հայտարարեց, թե 1992 թ. վերջերին գների ազատականացման քաղաքականությունը Ռուսաստանում կտա իր արդյունքը, բոլորովին էլ պատահական չէ, քանի որ հումքի տասնապատիկ եւ ավելի բանկացումը Ռուսաստանին մեծ եկամուտներ կբերի աղքատ հանրապետությունների հաշվին, միաժամանակ վերջիններիս պահելով տնտեսական կախվածության մեջ:

Հավանաբար ընթերցողը հիշում է այս տարվի հունվարի 3-ին գների բաց թողման հետ կապված Հայաստանի Գերագույն խորհրդի արտահերթ նիստում նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի խոսքն այն մասին, որ Ռուսաստանում սկսված այդ գործընթացն ստիպում է մեզ նույնպես անցնել գների ազատականացման: Դա ոչ այլ ինչ է, եթե ոչ Ռուսաստանի կողմից անկախության ճանապարհը բռնած հանրապետություններին տնտեսական կախվածության մեջ պահելու փաստի խոստովանություն: Այնպես որ, իրական անկախության ճանապարհը դեռ երկար է ու փշոտ:

Արեւմտյան մասնագետները, անդրադառնալով տնտեսական բարեփոխումների խնդրին, գտնում են, որ շուկայական տնտեսության ստեղծումը նախկին ԽՍՀՄ-ում կընթանա հիվանդագին ձեւով, որ դրա նորմալ ընթացքի կարեւորագույն պայմանները՝ օտարերկրյա դրամի եւ սեփականաշնորհման քաղաքականության առկայությունը բացակայում են: Այստեղից էլ, ըստ նրանց, քաղաքական գործընթացները կարող են տխուր հետեւանքներ ունենալ, եւ որպեսզի այն մի փոքր մեղմ անցնի ինչպես մեզ, այնպես էլ ողջ աշխարհի համար, պետք է աջակցել, իրենց արտահայտությամբ, «ծայրահեղ անկանխատեսելի Ռուսաստանին»: Իսկ այդ իրոք անկանխատեսելի երկրում արդեն սկսվել են վտանգավոր գործընթացներ: Ռուսաստանի բազմաթիվ տարածքներում նախագործադուլային դրություն է: Բոլորովին վերջերս Մոսկվայի «Մանեժնայա» հրապարակում 50 հազարանոց հավաք էր տեղի ունեցել, որ հնչել են կոմունիստական կարգախոսներ:

Տխուր կանխատեսումները կարող են իրականանալ, որովհետեւ Ռուսաստանը, հավասարիմ մնալով իր ոճին, տնտեսական բարեփոխումը եւս իրականացնում է «կացնային» կողքից քաղաքականությամբ: Օրինակ, համաձայն Ռուսաստանի կառավարության եւ հայտնի տնտեսագետների հաշվարկի, նվազագույն սպառողական զամբյուղը մինչեւ հունվարի 2-ը մեկ շնչի հաշվով հավասար է 450-550 ռուբլու: Պետության կողմից կատարած բանկացումներից նվազագույն աշխատավարձը հասատվեց 342 ռուբլի, եթե միջին ընտանիքը բաղկացած է 4 անձից, ապա նվազագույն պահանջված մինչհունվարյան պահանջմունքները կբավարարվեին 2000-ից 2200 ռուբլով: Քանի որ նվազագույն 342 ռ. աշխատավարձի դեպքում միջին աշխատավարձը չի գերազանցի 1000-1200 ռուբլուն, ապա առանց տնտեսագիտական լուրջ հաշվարկի էլ ակնհայտ է, թե ինչ է սպասվում ժողովրդի ճնշող մեծամասնությանը, ավելին, բարձր՝ 2000 ռ. անցնող աշխատավարձի դեպքում էլ չեն բավարարվում նվազագույն պահանջմունքները: Ինչ վերաբերում է նրան, որ կարող է ընտանիքից երկու անձ աշխատել, ապա դա պատրանք է, քանզի սպասվող գործազրկության պայմաններում չի բացառվում ընդհանրապես աշխատող ձեռքից ընտանիքի զրկվելը: Սա արդեն ոչ թե «շոկային թերապիա» է, այլ **շոկ** է առանց թերապիայի:

Հայաստանը, որպես հումքազուրկ հանրապետություն, կարող է հայտնվել ավելի վատ վիճակում, քան մյուսները: Այդ մասին կառավարությունն ազնվորեն խոստովանեց, եւ հավանաբար այդ է պատճառը, որ, ի տարբերություն մյուսների, նվազագույն աշխատավարձը մեզ մոտ ամենացածրն է՝ 280 ռ.:

Հնարավոր դժվարություններից խուսափելու համար անհրաժեշտ է, որ կառավարությունը արագացնի ժողովրդի վիճակը բարելավող ՀՌԱԿ-ի առաջարկած տնտեսական կամ նմանօրինակ այլ ծրագրերի անպահաղ իրականացումը: Մենք գտնում ենք, որ անհապաղ պետք է իրականացվեն՝ ա) լայնածավալ սեփականաշնորհում, բ) պետք է զբաղվել մասնավորապես Իրան, Թուրքիա եւ Մերձավոր Արեւելք տանող ճանապարհների դիվանագիտական բացմամբ՝ Արեւմտյան շուկայի հետ ակտիվ կապերի մեջ մտնելու համար պետք է դուրս գալ Պարսից ծոց, գ) անհրաժեշտ է հասակեցնել հարկային քաղաքականությունը, աշխատելով մեծ հարկերով չվախեցնել մարդկանց, ստեղծել գոնե 70 տոկոսանոց արտադրական լրիվ «ազատ գոտի», դ) ժողովրդի տնտեսական դրության բարելավումը, մեր կարծիքով, կապված է նաեւ վաճառելի հնարավոր բոլոր ձեռնարկությունների մասամբ եւ կիսովի վաճառքի հետ՝ մասնավոր անձանց, այդ թվում օտարերկրացիներին: Դա մեզ չպետք է վախեցնի եւ տեղիք տա սխալ մեկնաբանությունների: Եթե իրավիճակը օբյեկտիվորեն դարձել է այնպիսին, որ իշխանությունները չեն կարող կազմակերպել մարդկանց սոցիալական լիարժեք աջակցությունը, ապա արտադրական ձեռնարկությունների մասնակի վաճառքը օտարերկրացիներին մեծապես կնպաստի այդ խնդրի լուծմանը: Այսպիսով, ստեղծված քաղաքական եւ տնտեսական իրավիճակը հրամայաբար պահանջում է քաղաքական եւ տընտեսական կառույցների ամենաարագ արդիականացում եւ դրանց համապատասխանեցումը միջազգային չափանիշներին: Դանդաղկոտության դեպքում Հայաստանում եւս չի բացառվում քաղաքական ճգնաժամ:

Լեւոն ԲԱԲԱՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու



Գործ Սուրիկ ԹՈՐՈՍՅԱՆԻ

digitised by A.R.A.R.@

Մենք ամեն ինչ կանենք, որ Հայաստանը դուրս գա ճգնաժամից

Ընդամենը մեկ տարի է, ինչ ստեղծվել է Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցությունը: Այն ամեն ինչ փորելու կոչերով միտինգներ չի արել, իշխանության համար անզուսպ պայքար չի մղել, այլ դանդաղ եւ աննկատ փորձել է կազմակերպվել, ազդել Հայաստանում կատարվող քաղաքական եւ տնտեսական ընթացքների վրա: Այս հարցերի մասին է մեր թղթակից Հակոբ ԱՍԱՏՐՅԱՆԻ հարցազրույցը Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության Հանրապետական վարչության նախագահ Ռուբեն ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆԻ հետ:

– Պրն. Միրզախանյան, թերեւս մեր զրույցն սկսենք Սիրիա եւ Լիբանան կատարած ձեր վերջին ուղեւորությունից: Ի՞նչ նպատակ էր հետապնդում ձեր այցը:

– Մենք բժիշկ եւ ասմունքող Կամո Տեր-Պետրոսյանն ու ես հրավիրված էինք մասնակցելու Լիբանանում եւ Սիրիայում կազմակերպված Ռամկավար ազատական կուսակցության 70-ամյակին նվիրված հանդիսություններին: Լիբանանում այն կազմակերպել էր ՌԱԿ-ի երջանային վարչությունը, իսկ Սիրիայում Թեհեյան մշակութային միությունը: Բազմաթիվ հետաքրքիր հանդիպումներից հատկապես հատկանշական էին այցելությունները ՌԱԿ-ի Լիբանանի «Զարթոնք» օրաթերթը, ՀՀԴ-ի «Ազդակ» եւ Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցության «Արարատ» թերթերը: Եղանք նաեւ Գարեգին երկրորդ կաթողիկոսի մոտ, այցելեցինք հայ կաթոլիկ եկեղեցու պետ Հովհաննես-Պետրոս ԺԸ Գասպարյան կաթողիկոս-պատրիարքին: Ընդհանուր առմամբ, 70-ամյակին նվիրված հանդիսությունները անցան բարձր կազմակերպվածությամբ:

– 70 տարիները, անշուշտ, միանշանակ չեն անցել, եւ այդ առումով ՌԱԿ-ի անցած ճանապարհի նոր արժեքավորում, վերագնահատում տեղի չունեցա՞վ: Ասենք, թեկուզ Սփյուռք-Հայաստան փոխհարաբերությունների հարցում:

– Անշուշտ, կարող ենք խոսել հայրենիք-սփյուռք հարաբերությունների նոր փուլի մասին, որը պայմանավորված է քաղաքական այն մեծածավալ փոփոխություններով, որոնք տեղի ունեցան Հայաստանում: Դառնալով ազատ եւ անկախ պետություն, ադրելով միջազգային ճանաչման գործընթաց, մենք դրանով ոգեւորում ենք սփյուռքահայությանը: Ռամկավար ազատական կուսակցության դիրքորոշումը մնում է նույնը, հավատարիմ լինել ռամկավարական-ազատական գաղափարախոսությանը եւ նպաստել Հայաստանի բարգավաճմանը: Իսկ այն, որ 70 տարիների հայրենանվեր աշխատանքը համարել են ՌԱԿ-ի եւ կոմկուսի համագործակցություն, ամենեւին էլ այդպես չէ: Կոմունիստական եւ լիբերալ-դեմոկրատական գաղափարախոսություններն ունեն բեւեռային տարբեր մոտեցումներ հասարակության քաղաքական եւ տնտեսական զարգացման հարցում: Բայց ՌԱԿ-ը եւ հատկապես Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունն ու Թեհեյան մշակութային միությունը միշտ նպաստել են Խ. Հայաստանի զարգացմանը, նկատի ունենալով, որ այստեղ է կենտրոնացած հայ ժողովրդի հիմնական մասը, այս է հայոց հայրենիքը: Այս քաղաքականությանը եւ ՌԱԿ-ը, եւ նրա քույր կուսակցությունը Հայաստանի ՌԱԿ-ը հավատարիմ են նաեւ այսօր: Այժմ Հայաստանում քաղաքական նոր իրավիճակ է, կա բազմակուսակցական համակարգ, եւ այս պայմաններում Հայաստանի ռամկավարներս անշուշտ ունենալու ենք մեր քաղաքական վարքագիծը եւ հետապնդելու ենք որոշակի քաղաքական նպատակներ՝ լինելով միանգամայն ինքնուրույն: Քաղաքական կյանքը չի բացառում, որ մոտ փոխհարաբերություններ ունենանք այն քաղաքական կուսակցությունների հետ, որոնք իրենց գաղափարախոսությամբ եւ վարքագծով մոտ են մեր հայացքներին՝ անկախ նրանից, թե կառավարման համակարգում նրանք ինչպիսի տեսակարար կշիռ ունեն:

– Ռամկավարներին մեղադրում են, թե եւ կոմունիստների, եւ ՀՀԵ-ի օրոք, նրանք աշխատել են ծծել իշխանություններին, ինքնուրույն քաղաքականություն չեն տանում, օգտվում են տվյալ պահին իշխանության գլուխ կանգնած ուժերից: Եթե, օրինակ, դաշնակցությունը գա իշխանության գլուխ, նորո՞ց նույն քաղաքականությունը պետք է վարեք:

– Պաշտոնապես կարող եմ հայտարարել հետեւյալը, ոչ կոմունիստական կուսակցության հետ, ոչ այժմ Հայոց Համազգային Շարժման քաղաքականության հետ ամենեւին էլ բոլոր հարցերում չէ, որ համաձայն ենք եղել: Սակայն ոչ միայն իշխող քաղաքական ուժերի հետ, այլեւ բոլոր կուսակցությունների հետ պետք է քաղաքակիրթ հարաբերություններ հաստատել: Անպայման չէ, որ ընդդիմադիր կուսակցությունը ծայրահեղ պայքար ծավալի: Մենք կողմնակից ենք, որ քննադատական մոտեցումները ներկայացվեն քաղաքակիրթ ձեւով: Մեր կուսակցության համար անընդունելի է եղել քաղաքական հիստերիայի ցանկացած դրսեւորում: Ինչ-որ տեղ չմենալով քաղաքական կուլտուրայի որոշակի փորձ, որոշ կազմակերպությունների բվում է, որ եթե մեր վարքագիծը հանգիստ է, ապա մենք ընտրում ենք կառավարության կամ կառավարող քաղաքական ուժերի ցանկացած մոտեցում:

– Ձեր կարծիքներն ինչպե՞ս եք հասցնում հանրապետության ղեկավարներին եւ ինչպիսի արձագանքներ եք ստանում:

– Ես կարող եմ վերջին օրինակը բերել, երբ տեղի էին ունենում հանրապետության Գերագույն խորհրդի նախագահի ընտրությունները, ՀՌԱԿ-ի խորհրդարանական խումբը հանդես եկավ մի դիմումով, ուր կոնկրետ առաջարկներ էին արվում: Բացահայտ մեզ համար ընդունելի չեն Հայաստանում տնտեսական ռեֆորմի անցկացման ձեւերը, մասնավորապես նյութական արտադրության ոլորտում: Ինչ վերաբերում է տնտեսական ծրագրին, ապա այն հրադարակել՝ ենք եւ նշել, թե ինչ մեխանիզմներով ենք պատկերացնում անցումը շուկայական հարաբերությունների: Բացի այդ, պատրաստ ենք համաձայնել ներկա կառավարության եւ իշխող քաղաքական ուժերի ճիշտ քայլերի հետ: Մենք ողջունում ենք հողի սեփականաշնորհումը, Հայաստանի անկախ պետականության առաջին երջանի գործունեությունը: Մենք առաջին կազմակերպություններից մեկն էինք, որը օգոստոսյան հայտնի իրադարձություններից առաջ հստակ արտահայտեց իր վերաբերմունքը Հայաստանի անկախության վերաբերյալ: Մինչդեռ շատ դեմոկրատական ու հեղափոխական կազմակերպություններ այն ժամանակ այլ վերաբերմունք ունեին: Այնպես որ, եթե խոսենք որեւէ կուսակցության մոտ սկզբունքների բացակայության մասին, ապա դա ՀՌԱԿ-ին չի վերաբերում: Ամեն դեպքում, մենք որոշեցել ենք ինչպիսի աջակցություն դիրքորոշումը:

– Դուք նշեցիք, որ ՀՌԱԿ-ը կատարում է որոշակի աշխատանք: Սակայն ժառանգելով ՌԱԿ-ի ունեցած հեղինակությունն ու պատմական փորձը, ՀՌԱԿ-ն առայժմ կրավորականություն է ցուցաբերում առօրյա քաղաքական հարցերում: Ավելի բուռն քաղաքական գործունեություն ծավալելու ինչպիսի՞ ծրագրեր ունեք:

– Ես ձեզ հետ համաձայն չեմ: Նախ, ՀՌԱԿ-ի առաջին պատգամավորական ժողովի միայն առաջին փուլն է ավարտվել, որի ընթացքում հաստատվեց Հայաստանի ՌԱԿ-ի կանոնադրությունը, ժողովրդավար ձեւով ընտրվեց վարչություն, քննարկվեց կուսակցության ծրագիրը, որը որոշակի փոփոխություններից հետո կհաստատվի Ժողովի երկրորդ փուլում: Կընդունվի նաեւ կուսակցության քաղաքական պլատֆորմը, որում կուսակցությունը կբարադրի իր դիրքորոշումը քաղաքական զարգացման ամենակարեւոր հարցերի վերաբերյալ: ՌԱԿ-ը մեր ավանդական կուսակցություններից միակն է, որ սոցիալիստական չէ: Վերահաստատվելով Հայաստանում, մենք իսկապես բարոյական ենք եւ կրողը ՌԱԿ-ի բարի ավանդույթների եւ լիբերալ-դեմոկրատական գաղափարախոսության: Ինչ վերաբերում է կրավորականությանը, ցանկացած կազմակերպություն հնարավորություն ունի իր դիրքորոշումը հայտնելու մամուլում կամ լրատվության այլ միջոցներում: Կան նաեւ այլ ձեւեր՝ միտինգներ, ցույցեր: Սակայն քաղաքական հասունության այն փուլը, որ մենք ապրում ենք, իմ նշած վերջին ձեւերի համար ավարտված է: Բացի այդ, գոյակցության հզոր միջոցներից մեկն էլ հեռուստատեսությունն է, որից քաղաքական կուսակցությունները նույն ծավալով օգտվելու հնարավորություն չունեն: Քաղաքականությանը վերաբերող հաղորդումներում որոշես կանոն հանդես են գալիս նույն քաղաքական գործիչները, միեւնույն դիրքորոշումով, հաճախ արտահայտում են նույն մտքերը եւ որոշես կանոն պատկանում են նույն կազմակերպությանը: Դրա օբյեկտիվ նախադայմանը թերեւս այն է, որ այդ կազմակերպության ներկայացուցիչներն ընդգրկված են նաեւ կառավարման համակարգում եւ շատ հաճախ դիմում են որոշես պաշտոնյաներ: Մենք ունենք գործունեության այլ ոլորտ՝ խորհրդարանը: Խորհրդարանային խմբի ձեւավորումից հետո մենք ավելի ակտիվորեն կներկայացնենք մեր աշխատանքները եւ առաջարկությունները օրենսդրական նախագծերի ձեւով:

– Ըստ Ձեզ, պատգամավորական խմբի առաջացումից հետո կակտիվանան կուսակցության աշխատանքները: Ինչ է, դրանի՞ց է կախված կուսակցության ակտիվացումը:

– Շատ դժվար է որոշել ակտիվության չափանիշները: Ընտրություններին կուսակցությունը մասնակցել է եւ ամենակարեւոր իրադարձությունների վերաբերյալ իր դիրքորոշումը հայտնել եւ շարունակում է հայտնել: Նախագահական ընտրությունների ընթացքում մենք առաջադրել ենք մեր թեկնածուին: Կուսակցությունը շատ կարճ ժամանակամիջոցում տասնապատկվեց: ՀՌԱԿ-ը ունի ընդամենը մեկ տարվա պատմություն եւ այդ ժամանակամիջոցում կարողացել է տարածել իր գաղափարախոսությունը, իր թերթը «Ազգ»ը ունի հասարակական բավականին լայն ընդունելություն: Կարող է ինչ-որ տեղ սուբյեկտիվ եմ խոսում, բայց խնդիրն ակտիվության ձեւի մեջ է: Անշուշտ, այն քաղաքական գործիչները եւ կազմակերպությունները, որոնք ուշադրություն են գրավում ծայրահեղական ելույթներով, թվում է, թե շատ ակտիվ են: Հաճախ թվում է, որ եթե կա նման վարքագիծ, ապա տվյալ կազմակերպությունն ակտիվ է: Բայց կան ավելի լուրջ ցուցանիշներ: Օրինակ, եթե կան կուսակցություններ, որոնք խորհրդարանում մեկ անդամ էլ չունեն, մենք արդեն ձեւավորում ենք մեր պառլամենտական խումբը:

– Ժողովրդի մեջ երբեմն տարակուսանք է առաջացնում, որ Ռամկավար ազատական կուսակցության մեջ են ընդգրկվում մարդիկ, որոնք նախկինում եղել են կոմունիստական ակտիվ աշխատողներ եւ այժմ դարձել են ՌԱԿ-ի ջատագովներ: Ինչպե՞ս եք կարգավորում այդ անցումը:

– Նախկին կոմունիստական կուսակցության պատասխանատուները մեր կուսակցության մեջ ոչ մի տեսակարար կշիռ չունեն: Մասների վրա կարելի է հաշվել այն կոմունիստներին, որոնք դարձել են ՌԱԿ-ի անդամներ: Ընդունելության ժամանակ մենք ցույց ենք տալիս անհատական մոտեցում վերլուծելով տվյալ անձնավորության եւ անցյալը, եւ ներկան: Հակաժողովրդավար ծայրահեղ մոտեցում կլինի, եթե ինչ-որ մեկի համար փակենք քաղաքական գործունեության ճանապարհները: Հեռու չգնանք: Այսօր շատ ժողովրդավարներ դառնալով իշխանատերեր, թվում է մոռացել են իրենց երբեմնի ճառերը, թեեւ կան նաեւ քաղաքական բարձր հասկանիներ ունեցող մարդիկ, որոնք շարունակում են պարտաճանաչությամբ կատարել իրենց գործը: Այժմ կառավարության կազմում կարող եք տեսնել շատ կոմունիստական պատասխանատու ղեկավարների, որոնք այս առումով համապատասխանում են մեր մոտեցմանը:

– Այսպիսով, ի՞նչ առաջնահերթ խնդիրներ է դնում ՌԱԿ-ն իր առջեւ:

– Մենք ամեն ինչ կանենք, որ Հայաստանի Հանրապետությունը դուրս գա ճգնաժամից, տնտեսական քաղաքականության բնագավառում մեծ տեղ կհատկացնենք սեփականության տարբեր ձեւերի առկայությանը: Եթե այս վիճակից դուրս գալու լուրջ տնտեսական ծրագրեր չմշակվեն, մենք կկորցնենք մեր ինքնուրույնությունը: Դա չի բացառում նաեւ, որ մենք պետք է շարունակենք տնտեսական ինտեգրացիան եւ դառնանք միջազգային տնտեսական հարաբերությունների մասնակիցը:

– Այժմ քաղաքական մի շարք գործիչներ նշում են, որ ՌԱԿ-ի տնտեսական ծրագրերը իրագործելու դեպքում կուսակցությունը հաստատուն տեղ կգրավի Հայաստանի քաղաքական կյանքում: Այդ ծրագրերի իրագործման համար ինչպիսի՞ երաշխիքներ կան:

– Ամենամեծ երաշխիքը խորացող տնտեսական ճգնաժամն է: Ժողովուրդն այլեւս չի կարող հաշվել այս դրության հետ: Պատճառները գիտենք, բայց կառավարությունը ցույց չի տալիս ելքը: Եթե նա չգիտի այն, պետք է գա այն կառավարությունը, որը ցույց կտա ելքը:

– Բայց կա՞ նման կառավարություն:

– Թող գան նրանք, ովքեր գիտեն: Այժմ կա միայն վիճակի գնահատում, բայց դեռեւս չկա ելք գտնելու պատրաստակամություն: Մեր քաղաքական խնդիրը պետք է լինի ժողովրդավարական կարգավիճակ հաստատել Հայաստանի մեջ: Դրա համար մեծ ճանապարհ պետք է անցնել: Ի՞նչ ժողովրդավարության մասին կարելի է խոսել, երբ Հայաստանը չունի հիմնական օրենք սահմանադրություն: Չի կարելի նոր օրենքներ ստեղծել, եթե չկա հիմնականը: Շատերն են խոսում Սահմանադիր ժողովի մասին: Սակայն Սահմանադիր ժողովը եւ սահմանադրությունը տարբեր հասկացություններ են: Մշակված չի, թե Սահմանադիր ժողովը ինչպիսի հարաբերություններ կունենա խորհրդարանի հետ: Գոյություն ունեցող խորհրդարանը շատ հանգիստ կարող է ընդունել սահմանադրության մշակված եւ արժանի տարբերակը: Լուրջ վերափոխումների կարիք ունի դատական, օրենսդրական համակարգը, որը գործում է 1930-ին հաստատված մեխանիզմով: Դրա համար էլ անօրինականությունները շարունակվում են:

– Ռամկավարներին մեղադրում են նաեւ այն հարցում, որ դուք ակտիվ դեր չեք խաղում դարաբաղյան շարժման մեջ կամ այդ խնդրում աջակցություն ցույց չեք տալիս:

– Կան խնդիրներ ու հարցեր, որոնք ոչ մի քաղաքական կուսակցություն իրեն մենաշնորհելու իրավունք չունի: Առավել եւս դարձնելու քաղաքական շահարկման միջոց: ՀՌԱԿ-ն իր հնարավորությունների սահմաններում Ղարաբաղին նյութական եւ այլ տիպի աջակցություն ցույց է տվել եւ ցույց կտա: Մենք միջոցներ ենք հայթայթում մեր քույր կուսակցության միջոցով, որոնցի կազմակերպվի արցախահայության ինքնապաշտպանության գործը: Բայց դրա մասին մենք չենք հայտարարել, գտնելով, որ անաղմուկ աշխատելն ավելի արդյունավետ է, քան գովազդելը: Այժմ ինքնապաշտպանությունը պետք է լինի պետական միջոցներով, կուսակցությունները չպետք է ունենան իրենց զինված միավորումները, իսկ նյութական ու բարոյական օգնությունը պետք է լինի պետական մարմինների միջոցով: Այդ ամենին զուգահեռ պետք է ակտիվորեն փընտրենք նաեւ քաղաքական լուծման ուղիները:

– Ի՞նչ կասեիք Հայաստանի կողմից Ղարաբաղի անկախության ճանաչման մասին:

– Հայաստանի Հանրապետությունը պետք է ճանաչի Ղարաբաղի Հանրապետությունը: Եւ դա թելադրված է ոչ միայն բարոյականության դիրքերից, այլեւ պահի քաղաքական նպատակահարմարությամբ: ■

ՀՌԱԿ-ը հանդիպում է ԱԺՄ-ի եւ ՀՀԿ-ի հետ

ՀՌԱԿ պատգամավորական խումբը նախաձեռնել է Հայաստանի խորհրդարանում ներկայացված պատգամավորական խմբերի հետ հանդիպումների շարք: Այդ հանդիպումների ծիրում կիրակի, հունվարի 13-ին ՀՌԱԿ պատգամավորական խումբը հանդիպեց Ազգային ժողովրդավարների խմբի հետ:

Հանդիպման ընթացքում կողմերը փոխադարձաբար ծանոթացան խորհրդարանի աշխատանքներին, իշխանության մարմինների ձեւավորման գործընթացի իրենց պատկերացումներին: Երկուստեղ պայմանավորվածություն ձեռք բերվեց հետագա հանդիպումները շարունակելու:

1992 թ. հունվարի 23-ին կայացավ ՀՌԱԿ հանրապետական վարչության անդամներ Լեւոն Բաբայանի եւ Կարեն Կոստանդյանի հանդիպումը Հայաստանի Հանրապետական կուսակցության նախագահ Ատոմ Նավասարդյանի եւ փոխնախագահ Սիմոն Շահազիզյանի հետ: Հանդիպումը կրում էր խորհրդակցական բնույթ, որն ընդգրկում էր երկու ուղղվածություն Արցախը եւ Հայաստանում հնարավոր քաղաքական ճգնաժամը: Կողմերը հանգեցին նրան, որ Արցախի հարցի լուծման տակտիկական մի շարք խնդիրներ կարելի է եւ պետք է լուծել համատեղ: Ինչ վերաբերում է երկրորդ հարցին, ընդգծվեց կողմերի լիարժեք համակարծությունն այն մասին, որ ամեն կերպ պետք է խուսափել քաղաքական լուրջ ճգնաժամից եւ անել ամեն ինչ այն կանխելու համար: ■

ՀԵՐՔՈՒՄ

«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթը հունվարի 22-ի համարում հարցազրույց է հրապարակել Հայաստանի Հանրապետության նախագահի միջկուսակցական հարաբերությունների գծով խորհրդական Վահան Փափազյանի հետ: Շանդրադառնալով հարցազրույցում պրն. Վահան Փափազյանի արտահայտած վիճելի մտքերին, հայտնում ենք, որ նրա պաշտոնակոչումից հետո Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցությունը ոչ պաշտոնական եւ ոչ էլ թղթակից հանդիպում չի ունեցել նրա հետ:

ՀՌԱԿ Հանրապետական վարչություն

digitised by A.R.A.R.@

Թուրքիան միջնորդի դերում

Անկարան Մութալիբովի հետ կննարկի Ղարաբաղի հարցը

«Ջումհուրիյեթ», հունվար 10-16.- Թուրքիան դասդասվում է նախաձեռնությամբ հանդես գալ Անդրկովկասում: Անկարան շտապով բուռն գործունեություն կծավալի Ղարաբաղի դաշնառով Ադրբեջանի ու Հայաստանի միջև առաջացած լարվածության բուլացման համար: Այս ընթացքում մոտ օրերս նախատեսվում է բացել սահմանային մի անցակետ Թուրքիայի և Հայաստանի միջև:

Անկարան ուշի-ուշով հետևում է Բալկաններում տեղի ունեցող իրադարձություններին: Դրա հետ կապված, արտգործնախարարության փոխխոսնհրդական Բիլգին Օնանի գլխավորությամբ թուրքական դասվիրակությունը դաշտոնական այցով շրջագայության է դուրս գալու Բուլղարիա, Ռումինիա և Հարավսլավիա: Շրջագայությունից հետո Անկարան որոշում կկայացնի հարավսլավական հանրապետություններին ճանաչելու մասին:

Անկարայի ուշադրության կենտրոնում են նաև Ղարաբաղի խնդիրը, Վրաստանում տեղի ունեցող իրադարձություններն ու Անդրկովկասում անորոշության մեջ գտնվող նախկին ԽՍՀՄ սովորական սպառազինությունների ճակատագրի հարցը: Անկարան, որ ճանաչել է ԱՊՀ-ի անդամ հանրապետություններին և դասդասվում է նրանց հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատել, նպատակադրվել է արագացնելու Անդրկովկասում մնայուն խաղաղության հաստատմանն ուղղված քայլերը:

Արտգործնախարար Հիքմեթ Չեթինը, դասախանելով Անդրկովկասի հետ կապված «Ջումհուրիյեթ»-ի հարցերին, նշեց, որ Թուրքիան օրերս բուռն ջանքեր է գործադրելու հատկապես Ղարաբաղի հարցի լուծման ուղղությամբ և ասաց. *«Մենք Անդրկովկասում տեղի ունեցող իրադարձությունների և միջհանրապետական խնդիրների հանդեպ այս տարածքում մեծ հետաքրքրություն ենք ցուցաբերում: Պատրաստ ենք ոչ մի ջանք չխնայել Անդրկովկասում մնայուն խաղաղության հաստատման համար»:* Ինչպես նշեց Չեթինը, մոտ ժամանակներս Անկարա կատարելիք Մութալիբովի այցի ժամանակ, Ղարաբաղի հարցի լուծմանը բանակցությունների ընթացքում առաջնակարգ տեղ է հատկացվելու: Մութալիբովի հետ հանդիպումներում Անկարան օրակարգ է մտցնելու Ղարաբաղի հարցում միջնորդի դերում հանդես գալու իր ցանկությունը: Չեթինն այդ առթիվ արտահայտվեց հետևյալ կերպ. *«Վարչապետ Սուլեյման Դեմիրելի ուղերձը Ադրբեջանին* (դրանով նա նախազգուշացնում էր Ադրբեջանի ղեկավարությանը ԼՂԻՄ-ի լուծարման մասին ընդունված որոշման կապակցությամբ- «Ազգ»ը նախորդ համարներում անդրադարձել էր այդ ուղերձին) *նպաստեց ծայրաստիճան սրված լարվածության բուլացմանը Ղարաբաղում: Սա ցույց տվեց, որ Թուրքիան ի վիճակի է նախաձեռնություն հանդես բերել կողմերի միջև խաղաղության հաստատման գործում: Խաղաղության հաստատումն Անդրկովկասում համապատասխանում է բոլորի շահերին: Ադրբեջանի վարչապետ Հասան Հասանովի հետ վերջերս կայացած հեռախոսազրույցի ժամանակ մեզ հաջողվեց ներշնչել նրան, որ Ղարաբաղի հարցի լուծմանը ան-հրաժեշտ է հասնել խաղաղ ճանապարհով և երկկողմանի բանակցությունների միջոցով: Մենք մոտ օրերս դասդասվում ենք այդ ուղղությամբ բուռն ջանքեր գործադրել»:*



Հիքմեթ Չեթին

Արտգործնախարար Չեթինը, դասախանելով այն հարցին, թե *«կառավարությունը մտքակո՞ւմ է արդյոք խաղաղության որևէ ծրագիր Անդրկովկասի համար»*, ասաց. *«Դեռևս այդ հանգրվանին չենք հասել: Դա կախված կլինի իրադարձությունների ընթացքից: Ներկայումս օրակարգում որևէ ծրագիր տեղ չի գտել»:* Միաժամանակ Չեթինը խոսեց նաև Ղարաբաղի հարցի առնչությամբ Հայաստանի ղեկավարության հետ նաև բանակցելու հնարավորության մասին:

Ենթադրվում է, որ Մոսկվայում Թուրքիայի դեսպան Վոլքան Վուրալի 1991 թ. մայիսին Երևան կատարած այցի ժամանակ օրակարգ մտած երկու երկրների միջև սահմանային անցակետ բացելու խնդիրը ամենակարճ ժամանակահատվածում կգտնի իր լուծումը: Այսպիսով, Թուրքիան դիվանագիտական հարաբերություններից բացի, Հայաստանի հետ կհաղորդակցվի նաև ավտոճանապարհով: Ամենայն հավանականությամբ, առաջիկա ամիսներին կգործի Թուրքիայի ու Նախիջևանի ինքնավար հանրապետության միջև առկա անցակետը: Այդ հարցի առթիվ արտգործնախարար Չեթինը ասաց. *«Դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը զուգընթաց, մենք առևտրական կապեր ենք հաստատելու Անդրկովկասում բոլոր հանրապետությունների հետ: Դա անելու ենք ավտոճանապարհների միջոցով: Հետևաբար, անհրաժեշտ է անմիջապես բացել սահմանային այն անցակետերը, որոնք մինչև օրս փակ են մնում: Դա կլինի Անդրկովկասում խաղաղության հաստատման ուղղությամբ կատարված մեծ քայլ: Փոխհարաբերությունների զարգացումը դիվանագիտության և առևտրի ոլորտներում համապատասխանում է ինչպես անդրկովկասյան հանրապետությունների, այնպես էլ Թուրքիայի շահերին: Անդրկովկասի հանրապետությունները Թուրքիան որպես պատուհան են դիտում Արևմուտք դուրս գալու ճանապարհին: Խաղաղության հաստատումն Անդրկովկասում կնպաստի այդ հանրապետությունների դեպի Արևմուտք դուրս գալու ցանկությունների իրականացմանը»:* ■

Ուշացած հայտարարություն իրանա-իրաքյան պատերազմի մասին

Պերես դե Կուելյարը դեկտեմբերի 10-ին իր պաշտոնավարության ժամկետի ավարտին ընդամենը մի քանի օր մնացած, հանդես եկավ հայտարարությամբ եւ 1980 թ. բռնկված իրանա-իրաքյան պատերազմի համար մեղադրեց Բաղդադի կառավարությանը: Այս անվիճելի փաստի հրապարակումով, որն անվերապահորեն հայտարարվել էր դեռևս 1980 թ. ռազմական գործողությունների վայր մեկնած դիտորդների կողմից, վերջ է տրվում միջազգային կազմակերպություններում ծագած երկարաձգված բանավեճերին: Միևնույն ժամանակ այդ փաստի հրապարակումը առաջ է բերում նոր հարցականներ: Օրինակ, անչափ զայրակղիչ է այն հարցի մեկնաբանումը, թե ինչո՞ւ նրման ուշացած հայտարարության հրապարակումը ժամանակագրական առումով համընկնում է Լիբանանում գերեվարված պատանդների ազատ արձակման հետ: Սակայն ամենակարեւոր հանգամանքն այն է, որ ամբողջ պատերազմի ընթացքում նախահարձակին մատնացույց անելու հետ կապված խոսակցությունները վկայում են ՄԱԿ-ում տիրող այն մթնոլորտի մասին, որի բնորոշ հատկանիշներից էր օրվա պահանջներից բխող գործոնների գերադասումը միջազգայնորեն ընդունված իրավական եւ բարոյական նորմերի նկատմամբ: Երբ 1980 թ. սեպտեմբերի 22-ին իրաքյան զինված ուժերը Իրանի նկատմամբ լայնածավալ ռազմական գործողություններ ծավալելով գրավեցին այդ երկրին պատկանող տարածքները, միջազգային հանրության կողմից պաշտոնապես չճանաչվեց Իրաքի ագրեսիան: Ինչո՞ւ:

Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո նոր արտաքին քաղաքական կուրս ընդունած Իրանը, որը բնորոշվում էր «Ոչ դեպի Արեւմուտք եւ ոչ դեպի Արեւելք» կարգախոսով, հայտնվելով քաղաքական մեկուսացման մեջ, զրկվել էր միջազգային հանրության կարեկցանքից: Ոմանց համար էլ իրանա-իրաքյան պատերազմը պատրվակ էր ծառում գործադրելու համար նորաստեղծ իսլամական հանրապետության վրա, որի քաղաքական շահերը բնավ էլ չէին համընկնում Արեւմուտքի քաղաքական շահերի հետ:

Իրանա-իրաքյան պատերազմի նախահարձակ կողմը որոշելու եւ նրան դատապարտելու գործում Անվտանգության խորհրդի անդամ պետությունների լռությունը մեծ վնաս հասցրեց միջազգային հարաբերություններում իշխող սկզբունքներին, որի պատճառով 8 երկար ու ծիգ տարիներ շարունակվեց պատերազմը, եւ անգամ պատերազմի ավարտն ազդարարող ՄԱԿ-ի կոմից ընդունված 598 բանաձեւում չորոշվեց նախահարձակը, եւ անպատժելիությունը առիթ հանդիսացավ մի նոր Ծոցի պատերազմի հրահրմանը:

Գրիգոր ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ալժիրյան դեմքերն անհանգստացնում են հարեւաններին

Իրանի իսլամական հանրապետությունը, որ որոշակի հույսեր էր կապում Ալժիրում անցկացվող խորհրդարանական ընտրություններում արմատականների տարած հաղթանակի հետ, ընտրությունների երկրորդ փուլի չեղյալ հայտարարվելուց և նախաձեռնությունը ռազմական ուժերին անցնելուց հետո հուսախաբություն արտահայտեց: Չնայած Իրանի իսլամական հանրապետության խոսնակը Ալժիրում տեղի ունեցող իրադարձությունները անվանել է այդ երկրի ներքին խնդիր, բայց իրանական մամուլում տպագրվող քննադատական հրապարակումներից պարզորոշ զգացվում է, որ Թեհրանի վարչակարգը Ալժիրի հարցում իրեն պարտված է համարում:

Իրանի արտգործնախարարության տեսակետներն արտահայտող *«Թեհրան թայմս»* օրաթերթը երկուշաբթի օրվա առաջնորդող հոդվածում Ալժիրի վարչապետ Ահմեդ Ղազալիին այդ երկրի ենթահողաբջջման ճարտարապետն անվանելով, նշել է, թե վերջինս իր ձեռնարկումներով անխուսափելի է դարձրել քաղաքացիական պատերազմը:

Չնայած Ալժիրում տեղի ունեցածը չի կարելի ավարտված գործ համարել, բայց երկրի ոչ արմատականները, ինչպես նաև հարեւան արաբական երկրները, Եւրոպան եւ ԱՄՆ-ը կարող են առայժմ հանգիստ շունչ քաշել:

Արմատականներին օգնելու համար Թեհրանի վարչակարգի բացահայտ եւ քողարկված միջամտությունները, որոնք կատարվում էին ուղղակիորեն կամ Սուդանի միջոցով, բվում է, թե կմթագնեն եւ նույնիսկ լարվածություն կհաղորդեն Թեհրան-Ալժիր հարաբերություններին:

Ալժիրի նախագահ Բենջեդիդի անակնկալ հրաժարականը, Ազգային անվտանգության խորհրդի կողմից իշխանության գրավումը, բոլոր հիմնարկ-ձեռնարկությունների, նախարարությունների եւ կարեւոր օբյեկտների վրա բանակի հսկողության հաստատումը եւ խորհրդարանական ընտրությունների երկրորդ փուլի հետաձգումը այս հյուսիսաֆրիկյան 26 միլիոնանոց երկրին դրել է անելանելի վիճակի մեջ:

Այն դահլիճ, երբ բանակի որոշ հրամանատարների եւ արմատականների ղեկավարների միջև ընտրությունների երկրորդ փուլն անցկացնելու եւ «մորմավորների» կողմից ընտրությունների առաջին փուլում գրանցված ավելի քան 100 խախտման դեպքերի քննարկման վերաբերյալ գաղտնի բանակցություններ էին տեղի ունենում, հունվարի 11-ին Ալժիրի հեռուստատեսությունն անսպասելիորեն ընդհատեց իր հաղորդումները, եւ մի քանի րոպե անց հեռուստաէկրաններին հայտնվեց հոգնած եւ տանջահար, մազերն առաջվանից ավելի ճերմակած նախագահը, որը դողդոջուն եւ տխուր ձայնով հայտարարեց իր հրաժարականի մասին:

Հեռուստատեսային կարճ զրույցի ժամանակ Բենջեդիդն առանց նախաբանի ասաց, որ իր տեսակետով ներկայիս ճգնաժամը կանխելու ամենալավ միջոցը հրաժարական տալը եւ քաղաքական ասպարեզից հեռանալն է: Առանց ճգնաժամի հետ կապված մանրամասնություններին անդրադառնալու, նա ավելացրեց, որ հիմնահարցերի լուծման համար ձեռնարկված բոլոր քայլերը առաջ են բերել նոր բարդություններ: Սակայն Բենջեդիդի ելույթից կարելի է ենթադրել, որ նախագահական պաշտոնից հրաժարական տալու մասին որոշումը բելադրված է եղել բանակի այսպես կոչված «ազգային» խմբավորումների կողմից, քանի որ իր ելույթի վերջում Բենջեդիդը նշեց. *«Ձեռնարկված միջոցները ի զորու չեն ապահովելու իշխանությունների եւ ժողովրդի միասնությունը եւ չեն կարող խաղաղության երաշխիք հանդիսանալ»:*

Բենջեդիդի հրաժարականի մասին լուրը ցնցեց ամբողջ Ալժիրը: Հենց այդ դահլիճ բանակի տանկերն ու զրահամեքենաները իրենց հսկողության տակ վերցրին երկրի կարեւորագույն օբյեկտները, այդ թվում հաղորդակցության բոլոր միջոցները, արտգործնախարարությունը, վարչապետարանը, նախագահական դղյակը, քաղաքական կուսակցությունների հավաքատեղիներն ու դրանց կենտրոնական վարչությունները:

Անկանխատեսելի վտանգներով հղի ճգնաժամի սկիզբ կարելի է համարել դեկտեմբերի 26-ը՝ ընտրությունների առաջին փուլում արմատականների՝ Իսլամական փրկության ճակատի ակնհայտ հաղթանակը, որի ժամանակ արմատականները, գրավելով 186 տեղ, իշխող կուսակցության Ազգային փրկության ճակատի զբաղեցրած ընդամենը 16 պատգամավորական տեղի դիմաց ծեռ բերեցին մեծամասնություն: Այդ հաղթանակը մեծ անհանգստություն պատճառեց ժողովրդին, բանակին եւ հարեւան պետություններին: «Սոցիալիստական» կոչվող աղակրոնական եւ աշխարհիկ ճակատը Հասեյն Այաթ Ահմեդի գլխավորությամբ 26 պատգամավոր ուղարկեց խորհրդարան եւ իսլամականներից հետո դարձավ երկրի երկրորդ քաղաքական հզոր ուժը:

Բենջեդիդի հրաժարականից անմիջապես հետո Ալժիրի հեռուստատեսությունը հայտարարեց, որ երկրի սահմանադրական խորհրդի նախագահ Աբդուլմալեք Բենհաբիլեսը ժամանակավորապես ստանձնում է Հանրապետության նախագահի պաշտոնը, իսկ վարչապետ Ահմեդ Ղազալին ղեկավարելու է երկրի ընթացիկ գործերը: Միաժամանակ բանակը հանդես եկավ մի հայտարարությամբ եւ նշեց, որ Բենջեդիդի հրաժարականը, ինչպես նաեւ տանկերի ու զրահամեքենաների փողոցներում հայտնվելը ռազմական հեղաբջջման հետ ոչ մի առնչություն չունեն, քանի որ բանակը ենթարկվում է ոչ ռազմական օրգաններին, հատկապես վարչապետին եւ Անվտանգության խորհրդին:

Հարկ է նշել, որ խորհրդարանական ընտրությունների առաջին փուլում տարած «մորմավորների» հաղթանակն անհանգստություն պատճառեց ոչ միայն Ալժիրի ժողովրդի մի զգալի մասին, այլեւ հարեւան պետություններին՝ Թունիսին, Մարոկկոյին, Եգիպտոսին եւ նույնիսկ Լիբիային ու Արեւմտյան երկրների մայրաքաղաքներին՝ Վաշինգտոնին, Լոնդոնին եւ հատկապես Փարիզին:

Ալժիրցի մի դիվանագետ լոնդոնյան *«Ընյհանի»* թղթակցի հետ ունեցած մասնավոր զրույցի ժամանակ նշել է. *«Մորմավորները իշխանության հասնելու համար շահարկում են ժողովրդավարությունն ու ազատությունը, միևնույն ժամանակ պարզորոշ կերպով եւ պաշտոնապես հայտարարում, որ նրանց իդեալական վարչակարգում իսլամական հանրապետությունում արեւմտյան մեծության բարքերի արդյունքը հանդիսացող ժողովրդավարությունը դիտվելու է որպես անհարիր երեւույթ»:*

Հունվարի 11-ի ենթահեղաբջջումն արժանացավ Մարոկկոյի, Թունիսի եւ Եգիպտոսի զգուշավոր հավանությանը, իսկ Ֆրանսիան Բենջեդիդի հրաժարականն անվանեց *«լուրջ հետեւանքներով հղի կարեւոր իրադարձություն»:*

Սակայն Իրանի իսլամական հանրապետությունը չկարողացավ թաքցնել իր զայրույթն ու անհանգստությունը: Իրանի ռադիոյի մեկնաբանը երկուշաբթի օրը նշեց, որ արեւմտյան ժողովրդավարները կանգնած են ալժիրյան հեղաբջջման թիկունքում, եւ հետաքրքիրն այն է, որ ժողովրդավարները պատասխանում են ժողովրդի կամքը ճնշող բանակին:

Թեհրանի ռադիոն Բենջեդիդի հրաժարականն անվանելով *«Հյուսիսային Աֆրիկայում իսլամի ազդեցության ոլորտը սահմանափակող ամերիկյան եւ արեւմտյան ներկայացում»*, նշեց, որ այդ մեծ խաղավանքը անորոշության է մատնել երկրի աղագան: Թեհրանի ռադիոյի կարծիքով, իսլամական փրկության ճակատն անցնելու է ընդհատակյա գործողությունների:

Գ. Ս.

digitised by A.R.A.R.@

Դավադրություն «Արարատ»ի դե՞մ...

Օրերս խմբագրություն այցելեց «Արարատ»ի գլխավոր մարզիչ Արմեն ՍԱՐԳՍՅԱՆԸ. «Չնայած բազմաթիվ խոսուումներին, տպավորությունն այնպիսին է, որ «Արարատ»ի ճակատագիրն այլեւս չի մտահոգում որեւէ մեկին: Սփոփված որոշեցի հարցազրույց տալ «Ազգ» թերթին, որպեսզի ընթերցողները, ֆուտբոլասերները պատկերացնեն «Արարատ»ի անմխիթար վիճակը»:

Ստորեւ ձեր ուշադրությանն ենք ներկայացնում այդ հարցազրույցը, ավելի ճիշտ՝ մեր հանրապետության գլխավոր թիմի գլխավոր մարզչի տխուր մտորումները:

- 80-ական թվականների «Արարատ»ի տեւական ճգնաժամից հետո, վերջին տարիներին մեծ դժվարությամբ մեզ հաջողվել է ստեղծել երիտասարդ, համերաշխ մի կոլեկտիվ, որը լավ գիտակցելով իր առջեւ դրված մարզական խնդիրները, հասել է որոշակի հաջողությունների, մասնավորապես երկու տարի անընդմեջ գրավել է 7-րդ տեղը եւ մտել է զավաթի խաղարկության կիսաեզրափակիչ: Վերջերս Շվեյցարիայում տեղի ունեցած մինի Ֆուտբոլի միջազգային մրցաշարում «Արարատ»ը գրավել է պատվավոր 2-րդ տեղը, իրենից հետ թողնելով եւրոպական ճանաչում ունեցող այնպիսի թիմերի, ինչպիսիք են Շվեյցարիայի «Սերվետ»ը Պորտուգալիայի «Սպորտինգ»ը եւ Ֆրանսիայի «Կանն»ը, որոնք իրենց երկրների առաջնություններում առաջատարների թվում են:

Մեր հաջող ելույթը մեծ ոգեւորություն եւ խանդավառություն էր առաջացրել Շվեյցարիայի փոքրաթիվ հայկական համայնքում: Թե մեզ եւ թե մեր հայրենակիցներին համակել էր ազգային հպարտությունը, մանավանդ, որ մենք առաջին անգամ էինք հպնդես գալիս որպես անկախ պետության ներկայացուցիչներ:

Բայց ահա պարտի կատարման գիտակցությամբ վերադառնալով տուն, ինքներս, որ Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիան որոշել է մեզ չթույլատրել մասնակցելու նախկին ԽՍՀՄ առաջնությանը փոխարինելու եկած Անկախ պետությունների հանրակցության բաց առաջնությանը: Որոշումը կայացվել էր առհամարհելով թիմի ղեկավարների, խաղացողների կարծիքը, այն ներկայացնելով իբրեւ Հայաստանի իշխանությունների դիրքորոշում: Հասկացվեց, որ դա կառավարության որոշումն է, եւ հարցը ոչ միայն քվեարկման չդրվեց, այլեւ չքննարկվեց:

Հիմա մենք կատարված փաստի առաջ ենք կանգնել: ԱՊՀ-ի Ֆուտբոլային նորաստեղծ ասոցիացիան մեր փոխարեն առաջնության մեջ ընդգրկել է Ուզբեկստանի Նամանգան քաղաքի «Նովբախոր» թիմին: Մեր Ֆեդերացիայի այս անժամանակ եւ հապճեպ որոշման պատճառով «Արարատ»ն այլեւս հնարավորություն չի ունենա մասնակցելու միջազգային ընկերական եւ պաշտոնական մրցաշարերի, քանի դեռ Հայաստանի հանրապետության Ֆուտբոլի Ֆեդերացիան չի դարձել ՖԻՖԱ-ի կամ ՈԵՖԱ-ի անդամ, իսկ ԱՊՀ-ի հավաքականների մեր թեկնածուների Սարգիս Հովհաննիսյանի (առաջին հավաքական), Համլետ Մխիթարյանի ու Արմեն Շահգելդյանի (պատանեկան հավաքական) եւրոպայի առաջնության եզրափակիչներին հիշյալ թիմերի կազմերում նախապատրաստվելն ու մասնակցելը հարցականի տակ է դրվել: Երեւի հենց դա է պատճառը, որ Սարգիս Հովհաննիսյանը հուլիսի 22-ին ԱՊՀ-ի գլխավոր հավաքականի կազմում մրցաշրջագայության չմեկնեց ԱՄՆ:

«Արարատ»ն առաջարկեց իր առաջին թիմով մասնակցել ԱՊՀ-ի, իսկ երկրորդով՝ Հայաստանի առաջնությանը: Առաջարկը չանցավ: Հիմա մենք պետք է մասնակցենք մեր հանրապետության առաջնությանը, բայց մեզ մտահոգող շատ հարցեր կան: «Արարատ»ը չունի մարզադաշտ, վերականգնման կենտրոն, ուսումնամարզական բազա: Թվում էր, թե իբր «Հրազդան» մարզադաշտը եւ Զորաղբյուրի մարզաբազան «Արարատ»ինն են, սակայն այդպես չէ: Նախարարների խորհրդի 1989 թվականի օգոստոսի 10-ի թիվ 413 որոշումով ակումբի հիմնադրման պահից «Հրազդան»ը տրվել էր «Արարատ»ին, սակայն 1991 թ. ապրիլի 3-ին երեւանի խորհրդի թիվ 5-13 որոշումով այն վերցվել է «Արարատ» ակումբից: Ընդ որում, «Հրազդան» մարզադաշտն արդեն ունի «Կիլիկիա» անունով նորաստեղծ թիմ, որը նույնպես պետք է հանդես գա Հայաստանի բարձրագույն խմբի առաջնությունում: Ինչ վերաբերում է Զորաղբյուրի բազային, այն երբեք «Արարատ»ինը չի եղել:

Դարձյալ Նախարարների խորհրդի որոշմամբ մենք այն օգտագործում էինք անվարձահատույց հիմունքներով: Ակումբը վճարում էր միայն սենյակի համար, սակայն հիմա բազայի ղեկավարությունը նույնիսկ 1991 թվականի համար մեզանից պահանջում է մոտավորապես 200 հազար ռուբլի փոխհատուցում, իսկ այս տարվա համար միայն վարձակալական հիմունքներով է պայմանագիր առաջարկում: Միաժամանակ, հանրապետական սպորտկոմիտեն Նախարարների խորհրդին դիմել է նամակով, որպեսզի փոխվի որոշման համապատասխան կետը, այսինքն՝ անվարձահատույց չլինի:

Շրջանների թիմերը նախընտրելի վիճակում են, քան «Արարատ»ը, համենայն դեպս նրանք մարզադաշտ ունեն: Այս խնդիրը լուծելու համար դեկտեմբերի 3-ին նամակով դիմել ենք Հայաստանի սպորտկոմիտեին խնդրանք-առաջարկով, որպեսզի «Հանրապետական» մարզադաշտը, որը 6-րդ տարին է վերածված, տրամադրվի «Արարատ» ակումբին: Մենք պարտավորվում էինք համապատասխան հովանավորների օգնությամբ մեկ տարվա ընթացքում ամբողջական տեսքի բերել մեր մայրաքաղաքի սիրված եւ գեղեցիկ այդ կառույցը: Այդպիսով, մենք կունենայինք մարզադաշտ, վերականգնման կենտրոն, գիտամեթոդական կաբինետ, մարզադպրոց եւ այլն, որով պետական բյուջեն էլ կազատվեր ավելորդ հոգսերից: Հավատ, թե 6 տարվա ընթացքում մարզադաշտն այդ վիճակում պահելը արդեն ինչքան վնաս է բերել: Ընդ որում, մենք պարտավորվում էինք վերակառուցված մարզադաշտը տրամադրել նաեւ այլ մարզածեւերի եւ մարզասերների նպատակներին, սակայն առայժմ միայն սպասել ենք բանավոր բացասական պատասխան: Այսօր «Արարատ»ն այն թիմն է, որը նորմալ պայմաններ ունենալու դեպքում հնարավորություն կունենա մի քանի միլիոնի եկամուտներ բերել ակումբին, միաժամանակ նաեւ հանրապետությանը: Բոլորի համար պարզ է, որ եթե Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիան ընդունվի ՖԻՖԱ-ի կողմից, ապա մեր հանրապետությունը միջազգային մրցաստարեզներում պետք է ներկայացնի ազգային, օլիմպիական, երիտասարդական, պատանեկան հավաքականներ:

Հասկանալի է, որ այդ դեպքում տեսանելի ապագայում հավաքականները հիմնականում կհամալրվեն «Արարատ»ի խաղացողներով, որոնք այսօր արդեն անսպասելիորեն զրկվել են նորմալ պայմաններից:

Չենք ուզում հավատալ, որ երբեմնի բոլորի համար սիրելի «Արարատ»ի դեմ հիմա դավադրություն կա, սակայն տպավորությունն այդպիսին է:

Հայաստանի Ֆուտբոլի նորաստեղծ անդրանիկ Ֆեդերացիային, որն այսուհետ գործելու է պրոֆեսիոնալ հիմունքներով, նույնպես պետք է հուզեն «Արարատ»ի խնդիրները: Մենք բավականաչափ վճռականորեն ենք տրամադրված եւ ամեն ինչ կանենք, որպեսզի մեր ազգային Ֆուտբոլը բարձր դիրքերում լինի: Սա մասնավոր հարց չէ, քանի որ մենք էլ պետք է նպաստենք մեր անկախ պետականության ամրապնդման գործընթացին: Հենց այդ գիտակցությամբ նամակով դիմել ենք հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին:

Մենք վստահ ենք, որ այս հոդվածը կարդալուց հետո «Արարատ»ին հավատարիմ մեծաթիվ երկրպագուներն էլ իրենց ձայնը կբարձրացնեն թիմի պաշտպանության համար:

Ս. Բ.

Աղմուկը չի դադարում

«Ազգ»-ը նախորդ համարներում անդրադարձել էր Հունգարիայում Թուրքիայի դեսպան Բեդրեթքին Թունաբաշի դեմ Բուդապեշտում կատարված մահափորձի եւ դրա հետ կապված հրապարակել էր Հայաստանի Ազատագրման Հայ Գաղտնի Բանակի՝ ԱՍԱԼԱ-ի հայտարարությունը: Թեւ մահափորձը կատարվել էր դեկտեմբերի 19-ին, բայց դրա արձագանքները թուրքական մամուլում մինչեւ օրս շարունակվում են: Հրապարակվում են բազմաբնույթ նյութեր: Խմբագրությունը, ելնելով աղավաղումների հավանականությունից, այդ նյութերը թարգմանաբար ընթերցողի ուշադրությանն է ներկայացնում ոչ թե մահափորձի վերաբերյալ թուրքական մամուլի միջոցով հավելյալ տեղեկություններ հաղորդելու նպատակով, այլ փորձում է Հայաստանում ամբողջացնել միջադեպի շուրջ Թուրքիայում տիրող կարծիքները:

Միլլիյեթ, Մոսկվա, դեկտեմբերի 15.- Հայկական ահաբեկչական կազմակերպությունը՝ ԱՍԱԼԱ-ն, որ վաղուց դադարեցրել էր իր գործունեությունը, Թուրքիայի դեմ ուղղված սպառնալիքներով վերսին ասպարեզում հայտնվեց:

...Անցյալ շաբաթվա հինգշաբթի օրը ԱՍԱԼԱ-ն, ի հայտ եկավ Հայաստանի մայրաքաղաք Երեւանում: Արված հայտարարությունով կազմակերպությունը վերսին հավատաց, որ Հունգարիայում կատարված մահափորձի հեղինակն ինքն է եւ սպառնաց, թե *«Չինված գործողությունները կշարունակվեն, մինչեւ թուրքական կառավարության կողմից հայերի իրավունքների ճանաչումը»:*

Մինչդեռ, ՊԱԿ-ի ներկայացուցիչներն ու Հայաստանի ղեկավարները հայտարարել էին, թե ԱՍԱԼԱ-ն այլեւս գոյություն չունի: Հայտարարությունների լույսի տակ անշուշտ հարց է ծագում. ինչպե՞ս եղավ, որ ԱՍԱԼԱ-ն նորից ասպարեզ իջավ, ովքե՞ր են կանգնած նրա թիկունքում:

Հայաստանի ներկայիս ղեկավարները փորձում են իրենց ու ԱՍԱԼԱ-ի միջեւ ստեղծել հսկայական պատնեշ: Դա պատճառաբանվում է Թուրքիայի հետ փոխհարաբերությունները զարգացնելու նրանց ցանկությամբ: Բայց նրանք, բոլոր դեպքերում, ցեղասպանության պատասխանատվությունը շարունակում են բարդել Թուրքիայի վրա: Այնուամենայնիվ, նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը մասնավոր մի զրույցի ժամանակ, իր խոսքերով, շեշտը դնում է բավականին կարեւոր մի փաստի վրա: Նա ասում է. *«Մենք կամ կշարունակենք աստղել անցյալով, կամ էլ կմտածենք մեր երեխաների ապագայի մասին»:* Կարճ ասած, Տեր-Պետրոսյանն ակնարկում է հետեւյալը. *«Պատմությունից չեմ հրաժարվում, սակայն անընդհատ վերհիշելով այն ոչ մի տեղ հասնել չեմ կարող»:*

Ահա Տեր-Պետրոսյանի ու նրա շրջապատի այս մոտեցումով է պայմանավորված դրական մթնոլորտի ստեղծումը Թուրքիայի ու Հայաստանի փոխհարաբերություններում:

Վերսին անդրադառնանք ԱՍԱԼԱ-ի հարցին:

Չնայած Թուրքիայի հետ մերձեցումը ընդհանուր առմամբ արժանանում է հայ բնակչության հավանությանը, սակայն չենք կարող այդ ուղղությամբ անտեսել խոշոր երկու պատնեշի առկայությունը: Առաջինը երկրի ներսում Տեր-Պետրոսյանի քաղաքական հակառակորդներն են, իսկ մյուսը՝ Սփյուռքը:

Մասնավոր խոսակցության ժամանակ Տեր-Պետրոսյանը նշեց, որ իրեն Սփյուռքը հատկապես մտահոգում է եւ արտահայտեց Սփյուռքի տարբեր շրջանների ճնշումներին դիմակայելու դժվարությունները:

Ենթադրվում է, որ հենց այդ շրջաններն են կանգնած վերսին ասպարեզում հայտնվող ԱՍԱԼԱ-ի թիկունքում: Երեկ մենք Մոսկվայից հեռախոսակապ հաստատեցինք Հայաստանի իշխանության բարձրաստիճան ներկայացուցիչների հետ: Նրանց մոտ տիրում էր հետեւյալ ընդհանուր կարծիքը. *«Կան ուժեր, որոնք փորձում են խանգարել Անկարա-Երեւան փոխհարաբերությունների զարգացմանը»:*

Հայաստանի իշխանության ներկայացուցիչները ենթադրում են, որ ԱՍԱԼԱ-ն որպես կազմակերպություն այլեւս գոյություն չունի, բայց որոշ ուժեր, խոչընդոտելու համար Թուրքիայի հետ փոխհարաբերությունների զարգացումը, օգտագործում են կազմակերպությունն անունը եւ ջուր պղտորում: Վերջիններս միաժամանակ դատապարտեցին ահաբեկչությունը, անկախ այն բանից, թե ով է կատարում:

ԱՍԱԼԱ-ի խաղարտեղը մինչեւ օրս ցանկալի արդյունք չտվեց: Ընդհակառակը, կողմերը մեծ ջանքեր են գործադրում, որպեսզի հնարավոր լինի կարգավորել հարաբերությունները Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ: Թերեւս այդ ջանքերի արդյունքը կարելի է համարել Հայաստանից Թուրքիա նախապատրաստվող պատգամավորական այցը: Ինչպես նշում է Հայաստանի ղեկավարությունը, այցը առնվազն կլինի փոխվարչապետի մակարդակով: Այցի թվականը դեռ ճշգրտված չէ: Սակայն, Հայաստանի ներկայացուցիչների խոսքերով, այն ամենամոտ ժամանակներում իրագործելու համար կողմերը բուռն կերպով աշխատում են:

Թուրքիայի ու Հայաստանի փոխհարաբերությունները թեւակոխում են հետաքրքրական նոր փուլ: Իսկ մյուս կողմից նրանք, ովքեր ցանկանում են օգտագործել ԱՍԱԼԱ-ի խաղարտեղը, ձեռնունայն չեն մնում: ■

Ռայմոն Եզեկիլեան Ռայմոն Եզեկիլեան Ռայմոն Եզեկիլեան Ռայմոն Եզեկիլեան

FOR RENT
Furnished studios
in Paris

Ave Foch and Champs-Elysées areas

Rent: $1200 a month
(same price 1,2 or 3 weeks)



ՎԱՐՁՈՒ
Կահաւորուած սթիւտիոներ
Փարիզի մէջ,
Մայր Եւ Շաբ գ'էլիզէի թաղամասերը:
Վարձ՝ $1200 ամիսը,
(1, 2 կամ 3 շաբաթուան համար նոյն գինը)

For Reservations: Raymond Yezeguelian
34, Ave des Champs-Elysées, 75008 Paris
Tél : (331).43.59.65.81, Fax : (331) 40.74.08.59

Ռայմոն Եզեկիլեան Ռայմոն Եզեկիլեան Ռայմոն Եզեկիլեան Ռայմոն Եզեկիլեան

digitised by A.R.A.R.@

Եւրախորհրդարանի օգնությունը խոչընդոտների է հանդիպում

Ինչպես արդեն գրել ենք, Հայաստանի կառավարությունը դիմել էր Եւրախորհրդարանին, որպեսզի նախկին Խ. Միության հանրապետություններին կատարվելիք ընդհանուր սննդի օգնությունից Հայաստանն էլ իր բաժինը ստանա, մասնավորապես կաթի փոշի: Եւրախորհրդարանը, ընդառաջելով Հայաստանի դիմումին, որոշել էր Հայաստան ուղարկել 1850 տոննա կաթի փոշի, 91 բեռնատարներով: Այս գործը դյուրացնելու դարտականություն էր տվել Ֆրանսիայի եւ Հայաստանի Կարմիր խաչ կազմակերպություններին: Ֆրանսիական Կարմիր խաչի դատախազատուներ Ժակ Դելորեն եւ Քրիստոֆ Պերինին նոյեմբերի 23-ից արդեն Հայաստանում են եւ ղեկավարում են կաթի փոշու ստացման եւ բաշխման աշխատանքները:

Հայաստանի Կարմիր խաչի փոխնախագահ Ֆիլիբերտ Ասատրյանից ստացած լուրերի համաձայն, Հայաստան են հասել գալիք 91 բեռնատարներից 73-ը, այսինքն 1850 տոննա կաթի փոշուց 1400 տոննան:

Մնացած 18 բեռնատարները, այսինքն 450 տոննա կաթի փոշին, Հայաստան հասնելիս խոչընդոտների են հանդիպել:

Այս բեռնատարները, ինչպես օգնության մի շարք ապրանքներ, Հայաստան էին հասնում Վրաստանի տարածքով: Ֆիլիբերտ Ասատրյանը տեղեկացրեց, թե արդեն երկու շաբաթ է կաթի փոշու բեռնատարները կանգնած են Վրաստանի Զուգդիդի քաղաքի մաքսայցներում եւ չեն համարձակվում առաջանալ՝ վախենալով ականապատված կամրջից: Մեզ հասած լուրերի համաձայն, տարբեր տեղերից Հայաստանին օգնության ուղարկող 300 բեռնատարներ, որոնցից 18-ը դատականում են Եւրախորհրդարանի *«Հայաստանի համար կաթի փոշի»* գործողությանը, լովել-մնացել են Վրաստանում եւ ժամանակ առ ժամանակ ենթարկվում են անդատապարտների խմբերի հարձակումների:

Ռոստովի «Սովավտոտրանս»-ը խոստացել է մինչեւ փետրվարի 1-ը լուծել այդ հարցը, հակառակ դեպքում բեռնատարները դիտի դադարկվեն, եւ մեր կառավարության ուղարկած հատուկ օդանավերով կաթի փոշին հասցվի Հայաստան: Սակայն, օդանավային փոխադրումները չափազանց թանկ են՝ 1 կիլոգրամի համար 5-9 ռուբլի, եւ դարձ չէ դեռեւս, թե ո՞վ է մուծելու անսպասելիորեն մեջտեղ եկած այս ծախսերը:

Մյուս կողմից, Ֆրանսիական Կարմիր խաչի Հայաստանի մասնաճյուղից մեզ տեղեկացրին, թե այստեղի դատախանատու Ժան-Պոլ Ավագյանը երեկ մեկնեց Ռոստով՝ այս հարցերը կարգավորելու համար:

Այս դատճառով Բուշի խոստացած 10000 տոննանոց օգնությունը այլեւս չդիտի անցնի Վրաստանի վրայով, այլ նախ դիտի հասնի Սամբուլ, այնտեղից Կարսի վրայով՝ Հայաստան: ■

Մուջահեդները չեն կատարում խոստումները

ԱՊՀան մուջահեդները, որոնք Մոսկվայում տեղի ունեցած բանակցությունների ժամանակ խոսք էին տվել խորհրդային ռազմագերիների առաջին խումբն ազատ արձակել մինչեւ հունվարի 1-ը, չկատարեցին իրենց խոստումը, եւ տվյալներ չկան այն այսօր կատարելու մտադրության մասին: Այդ մասին հաղորդեցին Ռուսաստանի արտգործնախարարությունում, սակայն նշեցին, որ **«համապատասխան արձագանք են սպասում Պակիստանից»**:

Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչությունում հիշեցրին, որ փոխնախագահ Ալեքսանդր Ռուցկոյի եւ մուջահեդների ամենանհաշտ խմբավորման ղեկավար Գուլբեդդին Հեքմաթյարի միջեւ վերջերս կայացած հանդիպման ժամանակ վերջինս համաձայնվել էր հանդիպում կազմակերպել գերիներից մեկի եւ նրա մոր միջեւ: Սակայն դա էլ չի իրականանում:

Ռուսաստանի դիվանագիտությունը համառ փորձեր է ձեռնարկում աՊՀան ընդդիմության ղեկավարներից մեկի՝ Բուրհանուդդին Ռաբբանիի հետ կապեր հաստատելու գործում: Նա հաղորդագրություն էր ուղարկել, որ դատրաստ է ամենամոտ ժամանակ ազատ արձակել երեք ռազմագերիների եւ նրանց համար հանդիպում կազմակերպել Միջազգային Կարմիր խաչի ներկայացուցիչների հետ: Սակայն այս լուրը մինչ այժմ ոչնչով չի հաստատվում: ■

Ալժիրի արմատականները նոր ղեկավար են նշանակում

Այն բանից հետո, երբ իշխանությանը տիրացած խունտան ձերբակալեց Ալժիրի ընդդիմադիր գլխավոր շարժման իսլամական փրկության ճակատի առաջնորդ Աբդելքադեր Հաշանին, հինգշաբթի օրը ճակատը ընտրեց նոր առաջնորդ, նրան հանձնարարություն տալով դադարը շարունակել զինվորականների դեմ:

Խունտան արգելել է բոլոր հավաքները մզկիթներից դուրս, ձգտելով սահմանափակել իսլամ արմատականների քաղաքական գործունեությունը:

Երեկ, ուրբաթ, իսլամների սրբազան օրը տպասվում էին նոր խռովություններ երկրի ամբողջ տարածքում: ■

Չինաստան-Իսրայել դիվանագիտական կապերը վերահաստատվեցին

Չինաստանի եւ Իսրայելի միջեւ 1967 թ.-ից ի վեր ընդհատված դիվանագիտական դատրաստական հարաբերությունները վերահաստատվեցին երեկ, առիթ տալով, որ Չինաստանը մաս կազմի առաջիկա շաբաթ Մոսկվայում շարունակվելիք միջինարեւելյան խաղաղության բանակցություններին, որոնցում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամ:

Այսուհանդերձ, հակառակ ցարդ խզված հարաբերություններին, երկու երկրները վերջին տասը տարվա ընթացքում սերտորեն էին համագործակցում զենքի եւ այլ ապրանքների առեւտրում: ■

Իսրայելն այնուամենայնիվ կստանա ամերիկյան միլիարդները

Իսրայելը վերանայել է գրավյալ հողերում արտխման ենթակա 12 դատեստինցիներից 8-ի դարագան, տեղի տալով միջազգային ճնշումների առաջ: Մնացյալ 4-ի դարագայում Գերագույն դատարանը մերժել է նրանց գործը վերանայելու դիմումը:

Երեկ Մ. Նահանգների դեսքարտուղար Ջ. Բեյքերը, ընդունելով Իսրայելի դեսդան Շովալին, ճնարակեց 10 միլիարդ դոլլարի նոր օգնություն տալու հարցը, որը Վաշինգտոնի կողմից դայմանավորվում էր 12 դատեստինցիների արտխման եւ գրավյալ հողերի վրա նոր բնակավայրեր հիստատելու հարցերին: Դիտորդների կարծիքով, թեպ Ամիվը իր ամերիկյան հոգատարից այս անգամ կստանա ընդամենը 5 միլիարդ դոլլարի օգնություն: ■

Բուշի ժողովրդականությունը 70 տոկոսից ընկնում է 53 տոկոսի

«Ուոլ Սթրիթ Ջըռնըլ» թերթի եւ NBC հեռուստացանցի կողմից կատարված հարցման արդյունքներով, Մ. Նահանգների նախագահ Ջ. Բուշի ժողովրդականությունը վերջին հինգ ամիսներին ընկել է 17 տոկոսով: Ամերիկյան 1502 ընտրողներից 70 տոկոսը անհամաձայնություն է հայտնել նախագահի տնտեսական քաղաքականության նկատմամբ:

Հիշեցնենք, որ ներկայումս Մ. Նահանգները գտնվում է տնտեսական ճգնաժամային վիճակում, անշուշտ ամերիկյան չափանիշներով: ■

Լուրերը՝ Interfax-ի եւ մեր սեփ. թղթակիցների

Wasington Post-ը Արցախի մասին

Ամերիկյան ամենահեղինակավոր թերթը «Ուաշինգտոն Պոստ»-ը, հունվարի 23-ի իր համարում, առաջին էջում հրատարակել է ընդարձակ մի հոդված Արցախի եւ հատկապես մայրաքաղաք Ստեփանակերտի ծանր կացության մասին:

«Կովկասյան դատարված առանձնաբերջանը դրկվում է զանգվածային հարձակման դիմաց - Մայրաքաղաքը ռմբակոծվում է էթնիկական մահացու դայքարում» վերնագրի տակ թերթի խմբագիրներից Ջեյմս Ռյուդերը Ստեփանակերտից ուղարկած հոդվածում մանրամասն ներկայացնում է Արցախի կացությունը, արցախահայության դժխեմ վիճակը՝ զրկված էլեկտրականությունից, սննդից, աղահիվությունից ադրբեջանական ամենօրյա ռմբակոծությունների, նշանառուների գնդակի աղառնալիքի տակ:

Հոդվածագիրը տպավորիչ դատկերներով ներկայացնում է ականատեսի իր վկայությունները, խոսեցնում մարդկանց, քաղաքացիներին, դատմում հայ ազատամարտիկների կողմից կազմակերպվող դիմադրության մասին, ընդելով նաեւ, որ ոչ ադրբեջանական եւ ոչ էլ հայկական զինյալ խմբավորումները ենթակա չեն իրենց համաձայնասխան իշխանություններին:

Տարածաշրջանի քարտեզով եւ ուղղաթիռով տեղափոխվող հայ վիրավորի լուսանկարով նկարազարդված հոդվածի վերջում Ջ. Ռյուդերը, վկայակոչելով Ռուսաստանի խորհրդարանի մարդու իրավունքների հանձնաժողովի անդամ Անատոլի Շաբադի խոսքերը, գրում է, որ անհրաժեշտ է ճնշում գործադրել Ռուսաստանի վրա, որպեսզի կողմերին ընդունել տա աշնանը կայացած համաձայնության գործադրությունը: Սակայն, եզրակացնում է նա, Ստեփանակերտում այժմ մնացել է ընդամենը բանակային մի վաշտ, որը ձեռնոցի է մնում կոիվներին միջամտելուց, հակառակ Ղարաբաղի իշխանությունների դիմումներին: ■

Գեներալ-մայոր Մեչերյակովը դատրաստվում է դատի տալ Վազգեն Սարգսյանին. ինչո՞ւ

Հունվարի 23-ին «Ինտերֆաքս» գործակալությունը հաղորդել էր, թե Հայաստանում տեղակայված ԱՊՀ-ի զինված ուժերի 7-րդ բանակի հրամանատար, գեներալ-մայոր Եւգենի Իվանովիչ Մեչերյակովը մտադիր է Հայաստանի դաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանին դատի տալ: «Սնարք»-ին տված հարցազրույցում նա հաղորդել է, որ նախօրեին դաշտպանության նախարարը ձերբակալել է իրեն, եւ ինքը 24 ժամ գտնվել է մի նկուղում հնարավորություն չունենալով անգամ զանգահարել: Վազգեն Սարգսյանը «Սնարք» լրատվական գործակալության թղթակցին հայտնել է, թե Մեչերյակովը առանց Հայաստանի ղեկավարության իմացության ցանկացել է հանրապետության սահմաններից դուրս ուղարկել ռազմական ուղղաթիռները, դրանով իսկ խախտելով օրենքը: Նախարարը հրաժարվել է դատասխանել, թե որտեղ է գտնվել գեներալը:

Երեկ, մեր թղթակիցը զանգահարեց Ե. Մեչերյակովին՝ ճշտելու այդ հաղորդման հետ կապված մանրամասները: Գեներալն ասաց, թե ինքը չի ցանկանում անդրադառնալ այդ թեմային, քանզի դա խիստ մասնագիտական է, եւ խորհուրդ չի տալիս ոչ քաջատեղյակ մարդկանց եզրակացություններ անել: Ինչ վերաբերում է ուղղաթիռներին, ապա դրանք խնամքի եւ ստուգման կարիք ունեն: Տարածաշրջանի ուղղաթիռային վերանորոգման կայանը գտնվում է Ցխինվալում, դրա համար էլ ուղղաթիռները ուղարկել էի այնտեղ, ասաց գեներալը:

Հավատանք, որ գեներալն անկեղծ է, սակայն նա ինչո՞ւ էր այնուամենայնիվ ուղղաթիռները հանրապետությունից դուրս տարել առանց Հայաստանի ղեկավարության իմացության: ■

Ռուսաստանը կվերահսկի արտաքին տնտեսական բանկը

Հունվարի 23-ին Ռուսաստանի խորհրդարանի ղեկավար Ռուսլան Խասբուլատովը ստորագրեց Գերագույն խորհրդի նախագահության որոշումը, որի համաձայն ԽՍՀՄ արտաքին տնտեսական բանկը դադիդանվում է, բայց մինչեւ նրա մասին դայմանագրի ստորագրումը նրա կանոնադրական եւ դահեստի ֆոնդերը, շենքն ու ունեցվածքը հանձնվում են Ռուսաստանի կենտրոնական բանկի վերահսկողության տակ: Որոշմամբ նախատեսվում է, որ ԽՍՀՄ արտաքին տնտեսական բանկը կշարունակի վճարել նախկին Խորհրդային Միության արտաքին դարտքը եւ ղեկավարել նրա ակտիվները: Միաժամանակ Ռուսաստանը ճանաչում է նախկին ԽՍՀՄ-ի բոլոր դարտավորությունները Ռուսաստանի ֆիզիկական եւ իրավաբանական անձերի հանդեպ կատարված վալյուտային հաշիվների հետ, որոնք դետք է վերաձեւակերպվեն:

Մինչ այդ դադարեցվում է բոլոր վալյուտային միջոցների օգտագործումը, որոնք գրանցվել են ԽՍՀՄ արտաքին տնտեսական բանկի հաճախորդների հաշիվներին մինչեւ 1991 թ. դեկտեմբերի 31-ը, բացառությամբ՝ մինչ այդ ժամկետը կնքված գործարքների վճարումները: Այդ միջոցները կփոխանցվեն Ռուսաստանի հանրապետական վալյուտային դահեստի հաշվին: ■

Միավորվում են ՏԱՍՍ-ը եւ ՌԻԱ-ն

Ռուսաստանի մամուլի եւ զանգվածային լրատվության փոխնախարար Միխայիլ Ֆյոդորովը մերժեց *«Մոսկովսկիյե Նովոստի»* շաբաթաթերթում հրատարակված հաղորդագրությունը, թե ինքն է *«ՌԻԱ-Նովոստի»* եւ ՏԱՍՍ գործակալությունների միավորման մասին նախագահի հրամանագրի նախագծողը: Մ. Ֆյոդորովն ասաց, որ իր դաշտոնից ելնելով՝ միայն մասնակցել է հրամանագրի նախադատրաստման աշխատանքին: Փոխնախարարը հերքեց նաեւ թերթում արված այն ենթադրությունը, թե ինքը գլխավորելու է դրանց հիման վրա ստեղծված ՌԻՏԱ լրատվական գործակալությունը: Նա նշեց, որ դահանջել է այդ հաղորդագրությունների հերքումը:

Ըստ *«ԻԶ»*-ի տվյալների, մոտ օրերս ՌԻՏԱ-ի ղեկավար կհաստատվի ՏԱՍՍ-ի նախկին գլխավոր տնօրեն Վիտալի Իգնատենկոն: Նախատեսվում էր, որ «ՌԻԱ-Նովոստի» եւ ՏԱՍՍ գործակալությունների 1992 թ. բյուջեները կկազմեն համադատասխանաբար 400 եւ 600 միլիոն ռուբլի: Արտասահմանյան թղթակցական կետերի համար դետությունը դետք է տրամադրի 36 միլիոն դոլլար: Երկու գործակալությունների միավորումը նախատեսում է 400 միլիոն ռուբլու եւ վալյուտային զգալի գումարների տնտեսում: ■

Ուղղում

Մեր թերթի հունվարի 22-ի համարի 2-րդ էջում տպագրված *«Կամ խակդ, կամ կյանքդ»* հոդվածում հիշատակված *«կադի փոխնախարարը»* փոխարեն արդյունքում է: Կարդալ *«նախարարության դատասխանատուներից մեկը...»* ■

Azg semi-weekly, 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010
Խմբագիր՝ Ս. ԱՎԵՏԻՔԵԱՆ
Editor H. AVEDIKIAN
Macintosh համակարգչային շարուածքը Ռ.Ա.Կ. մամլոյ եւ տեղեկատուութեան կենտրոնի
ՀՀ նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տարան, Արշակունեաց 2

digitised by A.R.A.R.@